

Գեղամ Մ. Բաղայան

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ  
ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ**

Մաս վեցերորդ: Բիթլիսի նահանգի հյուսիսային, արևելյան և արևմտյան գավառները\*

**Բանալի բառեր** – Բուլանուխ, Կոփ (Կողբ) գյուղաքաղաք, Մանազկերտ գյուղաքաղաք, Խլաթ գյուղաքաղաք, Վանի Խլաթ, Մուշի Խլաթ, Դատվան (Ռահվա), Գենջ, Արշեն (Արդուշեն) ավան, Ճապաղջուր:

Շարունակելով Բիթլիսի (Բաղեշ) նահանգի նախաեղեռնյան ժողովրդագրական պատկերի ուսումնասիրությունը, ընթերցողի ուշադրության ենք ներկայացնում 3 սանջակների մի շարք գավառներ՝ Բուլանուխ, Մանազկերտ, Վարդո (Մուշի սանջակ), Խլաթ կամ Ախլաթ՝ Դատվան–Ռահվայի գավառակի հետ (Բիթլիսի Կենտրոնական սանջակ), Գենջ, Ճապաղջուր (Գենջի սանջակ): Նշված վարչամիավորները գրավել են նահանգի հյուսիսային, արևելյան և արևմտյան հատվածները:

Հիմնական սկզբնաղբյուրները դարձյալ մնում են 1912–1914 թթ. հայ բնակչության թվի, տնտեսական կացության և կրթական ու մշակութային դրության վերաբերյալ առաջնորդարաններում կազմված տեղեկագրերը<sup>1</sup>: Ուշագրավ տեղեկություններ են պարունակում մասնավորապես **Նազարեթ Մարտիրոսյանի** ցուցակները, որոնք շատ դեպքերում, կարելի է ասել, եզակի են<sup>2</sup>:

Չնոռանանք նաև Հայաստանի ազգային արխիվի կողմից հրատարակված Մեծ Եղեռնի ականատեսների վկայությունները, որոնք շատ հաճախ

\*Ընդունվել է տպագրության 16.08.2016:  
1 Տե՛ս **Թէոդիկ**, Գողգոթա հայ հոգևորականության և իր հօտին աղէտալի 1915 տարիին, Թեհրան, 2014; **Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian**, Les Arméniens dans l'Empire Ottoman a la veille du Génocide, Paris, 1992, pp. 477–490.  
2 Տե՛ս «Վան–Տոսպ», Թիֆլիս, 1916, թիվ 14, էջ 7 (Բուլանուխի, Մանազկերտի և Վարդոյի համար); թիվ 15, էջ 8 (Խլաթի և Դատվանի համար): Հմնտ. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 397 (Գևորգ Մերտոյի), ցուցակ 1, գործ 1, թերթ 15, 17: Այս տեղեկությունները երբեմն լրացվել են Ա-Դոյի լավ հայտնի գրքում («Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները», Եր., 1912) զետեղված տվյալների հիման վրա, որոնց մի մասը, ինչպես նշել ենք, դարձյալ Ն. Մարտիրոսյանի կողմից տրամադրված նյութերն են:

Հ (ԺԳ) փաթի, թիվ 3 (55), հայխ-սեպտեմբեր, 2016  
ՎԿՎ համահայկական հանդես

ուշագրավ տվյալներ են հաղորդում նշված գավառների բնակավայրերի հայկական սրբավայրերի ու նրանցում պահվող ձեռագիր մատյանների մասին<sup>3</sup>:

Այս տեսակետից խիստ արժեքավոր է նաև **Մանվել Միրախորյանի** եռահատոր գիրք-ուղեգրությունը<sup>4</sup>: Ավելի մեծաթիվ են առանձին գավառներին վերաբերող հայ հեղինակների աշխատությունները: Դրանք, որպես կանոն, տարբեր պարբերականներում հրատարակված հոդվածներ են, երբեմն՝ մենագրության տիպի գործեր: Այս շարքում իրենց ուրույն տեղն ունեն նաև հազվագյուտ արխիվային փաստաթղթերը: Մասնավորապես՝ արժեքավոր են 1870-ական թթ. վերջին կազմված տեղեկագրերը **Խլաթի** և **Դատվան-Ռահվայի** հայ բնակչության վերաբերյալ<sup>5</sup>: **Խլաթի** գավառի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայտնի հայագետ **Աղեքսանդր Երիցյանն** Էրզրումի նահանգին նվիրված իր ռուսերեն հայտնի աշխատությանը կից հավելվածում<sup>6</sup>:

Կցանկանայինք կրկին առանձնացնել «**Լումայ**» հանրահայտ հանդեսում 19-րդ դ. վերջին հրատարակված «**Մշոյ աշխարհ**» հոդվածաշարը, ուր եզակի տեղեկություններ են հանդիպում **Մուշի սանջակի**, այդ թվում՝ ներկայացվող գավառների վերաբերյալ (դարձյալ 1870-ական թթ.)<sup>7</sup>:

Արժեքավոր է արևմտահայ հայտնի բանահավաք **Բենսեի (Սահակ Մովսեսյան)** ուսումնասիրությունը՝ նվիրված հայրենի **Բուլանուխին**<sup>8</sup>: Ուշագրավ, հաճախ՝ հազվագյուտ են նույն հեղինակի մեկ այլ հոդվածում զետեղված հաղորդումները, ուր ներկայացված են Արևմտյան Հայաստանի մի շարք գավառների, այդ թվում՝ **Խլաթի, Բուլանուխի** և **Մանազկերտի**, պատմական հուշարձանները<sup>9</sup>: Առանձնակի ուշադրության են արժանի արևմտահայ նշանավոր հասարակական և գրական գործիչ **Գեղամ Տեր-Կարապետյանի** ուղեգրային հոդվածաշարերը, ուր հանդիպում են եզակի տեղեկություններ մասնավորապես **Գենջի** և վերջինիս գավառակների, ինչպես նաև **Բուլանուխ-Մանազկերտի** վանքերի մասին<sup>10</sup>:

Օգտակար են հայտնի դաշնակցական գործիչներ **Կարո Սասունու** հավաքած վիճակագրական նյութերը (օգտագործել ենք **Գենջի** և **Ճապաղջրի** տվյալները)<sup>11</sup>, **Ռուբենի (Մ. Տեր-Մինասյան)** աշխատությունում

3 Տե՛ս «Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ», փաստաթղթերի ժողովածու, հատոր 2 (Բիթլիսի նահանգ), Եր., 2012:

4 Տե՛ս **Միրախորեան Մ.**, Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գաւառս Արևելեան Տաճկաստանի, մասն Ա, Կ. Պոլիս, 1884, մասն Գ, 1885:

5 Տե՛ս «Մարդաթիւ և հարկահամար Բաղէշոյ վիճակիս».- «Արձագանք», Թիֆլիս, 1882, թիւ 18, էջ 278-279:

6 Տե՛ս **Ерицов А. Д.** Материалы для описания Турецкой Армении. I. Эрзерумский вилайет, Тифлис, 1884.

7 Տե՛ս «Լումայ», Թիֆլիս, 1897, գիրք Ա, էջ 161-164: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին III, գգ. 49, 57: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Կ. Պոլսո Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի հրահանգով 1881 թ. կազմված մեկ այլ տեղեկագիր՝ Բիթլիսի (Բաղէշ) շրջակա գավառակների մասին, ուր առանձնակի արժեքավոր են գյուղական եկեղեցիների (այդ թվում՝ չգործող) և վանքերի մասին տվյալները: Տե՛ս «Բաղէշ և իր շրջակայքը».- «Լումայ», 1900, Գիրք Ա:

8 Տե՛ս **Բենսե**, Բուլանուխ կամ Հարք գաւառ, Թ., 1901:

9 Տե՛ս **Ս. Մովսէսեան**, Հնութիւններ Տաճկահայաստանում.- «Համբարաբեր», Թ., 1916:

10 Տե՛ս **Տէր-Կարապետեան Գ. (Մշոյ Գեղամ)**, Տարօնի վանքերը: Ուղևորի յիշատակներ, Եր., 2003:

11 Տե՛ս «Պատմություն Տարօնի աշխարհի», պատմագրեց **Կ. Սասունի**, Պէյրոթ, 1957:

հանդիպող **Խլաթի** հայ բնակչության ուշագրավ վիճակագրությունը, որը վերցված է հայ ազատամարտի գործիչ **Երկաթի (Արմենակ Լևոնյան)** հուշատետրից<sup>12</sup>: Ինչպես մյուս հողավաճներում, այստեղ ևս մեր ուշադրության կենտրոնում են եղել հայկական վանքերի և այլ սրբավայրերի վերաբերյալ տեղեկությունները, որոնք վերցրել ենք **Արիստակես Տեկանցի**<sup>13</sup>, **Տրդատ Պալյանի**<sup>14</sup>, **Համազասպ Ոսկյանի**<sup>15</sup> աշխատություններից: Այս առումով շահեկան են նաև նշանավոր հայագետ, Մխիթարյան միաբան **Ղուկաս Ինձիճյանի** հայտնի երկում<sup>16</sup>, և, հատկապես Կ. Պոլսում հրատարակվող Հայոց Սուրբ Փրկչյան հիվանդանոցի օրացույցում առկա տեղեկությունները:<sup>17</sup>

Հողվածը պատրաստելիս օգտագործել ենք նաև ԺԳ-ԺԷ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարանները, մասնավորապես՝ որոշ բնակավայրերի եկեղեցիները և պատմական անվանումները ձշտելու կամ այլ լրացուցիչ տվյալներ հայթայթելու նպատակով: Կցանկանայինք այս շարքում առանձնացնել ըստ անվանի հայագետ **Գարեգին Հովսեփյանցի**՝ 12-րդ դարով թվագրվող **Խուրթի** նշանավոր **Սուրբ Աղբերիկ** վանքի և **Տարոնի Սուրբ Հովհաննես (Եղորոտի)** 1445 թ. վանական կոնդակները, ուր պահպանված են իրենց բնույթով եզակի տեղեկություններ<sup>18</sup>: Նյուրթի հետ կապված՝ մեր ձեռքին են եղել նաև ուշագրավ այլ նյութեր, որոնք ցրված են «**Վան-Տոսպ**»<sup>19</sup>, «**Աշխատանք**»<sup>20</sup>, «**Մշակ**»<sup>21</sup> պարբերականների տարբեր համարներում:

Հետաքրքիր տվյալներ են հանդիպում օտարալեզու գրականության մեջ: Այս շարքում առանձնանում է ռուսական աղբյուրների հաղորդած նյութը, քանի որ Բիթլիսի նահանգի տարածքը 19-րդ դ. կեսերից Կովկասյան Գլխավոր շտաբի զինվորական հրամանատարության կողմից դիտվում էր ռուս-թուրքական հնարավոր նոր պատերազմի կարևոր ռազմական թատերաբեմ: Հետաքրքիր է, մասնավորապես 19-րդ դ. 80-ական թթ. վերջին Վանում Ռուսաստանի փոխհյուպատոս **Ա. Մ. Կոլյուբակինի** ռազմավիճակագրական ուսումնասիրությունը, որի հաղորդած տվյալները,

12 Տե՛ս **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե հատոր: Տարօնէն Թիֆլիս (1908-1909):

13 Տե՛ս **Տեկանց Ա.**, Այցելություն ի Հայաստան: 1878, Եր., 1985:

14 Տե՛ս **Տրդատ Եպիսկոպոս Պալեան**, Հայ Վանորայք, Սուրբ Էջմիածին, 2008:

15 Տե՛ս «Տարօն-Տուրուբերանի վանքերը», գրեց դկտոր. Հ. **Համազասպ Ոսկեան** Մխիթարեան ուխտէն, Վիեննա, 1953: Որոշ դեպքերում անհրաժեշտ տվյալները քաղել ենք նույն հեղինակի Վասպուրական-Վանի վանքերը (Գ մաս, Վիեննա, 1947) եռահատորյակից:

16 Տե՛ս **Ինձիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Առաջին: Ասիա, հատ. Ա, Վէնէտիկ-Սբ Ղազար, 1804:

17 Տե՛ս «Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց», 1903, 1904:

18 Տե՛ս **Գարեգին Ա Կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա (Ե. Դարից մինչև 1250թ.), Անթիլիաս, 1951, էջ 179/180-189/190: **Սահակ Ա. Մուրատեան**, Նագարէթ Պ. Մարտիրոսեան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից, խմբ. **Արայ Գալայձեան**, Երուսաղէմ, 1967, էջ 199-204: Տե՛ս նաև **Քաղայան Գ.Մ.**, **Տարոնի Ս. Հովհաննեսի** (Եղորոտի) վանքի 1445 թվականի կոնդակը (պատմա-աշխարհագրական ակնարկ.-«Էջմիածին», Սբ Էջմիածին, 1997, Ժ, էջ 88-105:

19 Տե՛ս «Ճամբորդական նօթեր: Վանայ լիճ».-«Վան-Տոսպ», Վան, 1913, N 43, էջ 521; N 44, էջ 534; N 45, էջ 543:

20 Տե՛ս «Աշխատանք», Ե., 1917 (Ա տարի), N 100, էջ 4: «Գրաւուած վայրերու վիճակագրական և այլ տեղեկութիւններ».-Ե., 1917 (Բ տարի), N 13, էջ 2: N 13, էջ 4: Մաժակ, Մանազկերտ, թիւ 60, էջ 3: Նույնի՝ Բուլանքի, N 62, էջ 3 (այս հողավաճները կարևոր են հատկապես 1915-ից հետո վերադարձածների վիճակագրության ձգգրտման համար):

21 Տե՛ս Ատրպետ, Բուլանքի.-«Մշակ», Թ., 1915, N 213-214:

սակայն, անհրաժեշտ է քննադատաբար ընդունել<sup>22</sup>: Որոշ դեպքերում օգտագործել ենք նաև 1890-ական թթ. **Վանում** Ռուսաստանի մեկ այլ փոխհյուպատոսի՝ **Վ. Տ. Մանսկու** տվյալները, թեև հեղինակը, գրեթե ամբողջությամբ կրկնում է Ա. Կոյուբակինին<sup>23</sup>: Ավելի հետաքրքիր և ինքնուրույն տեղեկություններ են հաղորդում 20-րդ դ. 1-ին տասնամյակին Վանի ռուսական փոխհյուպատոսներ **Ա. Գ. Տումանսկին**<sup>24</sup> և **Ռ. Տ. Տերմենը**<sup>25</sup>: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև ռուսական բանակի Գլխավոր շտաբի փոխգնդապետ, հետախույզ **Տոմիլովի «Հաշվետվությունը»**, ուր նկարագրված է վերջինիս **Կովկասից Արևմտյան Հայաստանի** տարածքով դեպի **Միջագետք**, ապա՝ **Միջերկրականի** ծովափ անցած երթուղին<sup>26</sup>: Օգտվել ենք նաև 1911 թ. **Կ.Պոլսում** (Ստամբուլ) Վ. Տ. Մանսկու՝ օսմանյան թուրքերեն թարգմանությամբ լույս տեսած գրքի ժամանակակից թուրքերեն տարբերակից, որը պատրաստել է իմամ (հոգևորական), ազգությամբ քուրդ **Հայդար Վառլն** (Haydar Varlı)<sup>27</sup>: Պետք է նշել, որ վերջինս բավականին ազատ է վարվել բնագրի հետ՝ կատարելով կամայական հավելումներ և իր կարծիքով՝ «ձջգրումներ», հատկապես բնակչության թվաքանակին ու ազգային կազմին վերաբերող հատվածներում: Այնուամենայնիվ, հեղինակի մոտ կան նույնիսկ հայկական աղբյուրներին անծանոթ լրացուցիչ վիճակագրական տեղեկություններ հայաբնակ մի շարք գյուղերի վերաբերյալ (օրինակ՝ **Մանազկերտի** և **Վարդոյի** գավառներում), ինչը հնարավորություն է ընձեռում ավելի ամբողջական պատկերացում կազմել Բիթլիսի (Բաղեշ) նահանգի հյուսիսային հատվածում հայերի տեղաբաշխվածության մասին:

Ավարտելով նշենք, որ բնակավայրերի ցուցակները կազմելիս կրկին առաջնորդվել ենք մեր նախորդ հոդվածներում կիրառված սկզբունքներով, ուստի հետայսու դրանց այլևս չենք անդրադառնա:

## 1. Բուլանուլիսի գավառ

**Բուլանուլիսը** կամ պատմական **Հարքը** գտնվում էր Բիթլիսի (Բաղեշ) նահանգի հիուսիս-արևմտյան հատվածում: Գավառն ընդգրկում էր **Արածանի-Մուրատի** միջնահովտում տարածվող **Հարքի (Բուլանուլիս)** հացառատ դաշտը, որը հիմնականում ոռոգում էին մայր գետի ձախակողմյան **Քոռջուր** (պատմական **Կորոյ ջուր**, հնագույն **Կոր** կամ **Կորի** գավառի անունից) և **Լգաջուր (Վարդ)** վտակները: Գավառի արևելյան հատվածում գտնվում էր **Խաչլու** (Ժողովրդի կողմից կոչվում էր «**Խաչվա գյուղ**») կամ

22 Տե՛ս **Колобакин А.М.**, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, том I, часть I, Тифлис, 1888; т. 8, ч. 2, Т., 1890.:

23 Տե՛ս **Маевский В. Т.** Военно-статистическое описание Ванского и Битлисского вилайетов, Т., 1904.

24 Տե՛ս "Очерк района Эрзерумского и Битлисского вилайетов, прилегающего к левому флангу нашей операционной линии - к Эрзеруму и маршрутные описания. Отчет о полевой поездке 1903 года", полковника **А. Г. Туманского**, бывшего Российско-имперского вице-консула в г. Ване, Т., 1909.

25 Տե՛ս [**Термен Р. Т.**], Отчет о полевой поездке 1907 года в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Т., 1909.

26 Տե՛ս «Отчет о поездке в Турцию Генерального Штаба подполковника **Томилова**», ч. 2, Санкт-Петербург, 1907.

27 Տե՛ս **Kürt-Ermeni İlişkileri**, Günümüz Türkçesine çeviren HaydarVarlı, emekli imam, Ocak, 1997.

**Խազանա** լճակը, որի հարավում ընկած էր **Խազանա** փոքր դաշտը: **Բլեջանի** լեռներով, որոնց անունը, ի դեպ, կապում են բռնակալ **Բելի** աճյունը **Հայկի** կողմից այստեղ թաղելու պատմության հետ, **Բուլանուխը** բաժանվում էր **Վերին** և **Ներքին (Ստորին)** գավառակների կամ գյուղախմբերի: Գավառը սահմանակից էր հյուսիս-արևմուտքից՝ **Խնուսին** (Էրզրումի նահանգ), հյուսիս-արևելքից և արևելքից՝ **Մանազկերտին**, հարավ-արևելքից՝ **Խլաթին (Բզունյաց** կամ **Խլաթի** լեռներով), հարավ-արևմուտքից՝ **Մուշ-Տարոնին** կամ **Մշո գավառին (Սեղանսարի** լեռնաշղթայի ճյուղերով), իսկ արևմուտքից՝ **Վարդոյին**: Բուլանուխի կենտրոնն **Արածանուց** շուրջ 8 կմ հարավ՝ **Քոռջրի** ձախ ափին գտնվող **Կոփ** գյուղաքաղաքն էր՝ կազմված **Վերին** և **Ներքին (Վարի)** թաղերից: Վերջինս 1-ին անգամ հիշվում է 12-րդ դ. սկզբով թվագրվող **Խուրթի Սուրբ Աղբերիկ** վանքի կոնդակում՝ «**Կողբ**» անունով: 1914-ին **Կոփն** ուներ շուրջ 870 տուն բնակիչ, որից 650-ը (5100 անձ)՝ հայեր: Գյուղաքաղաքի մահմեդական բնակչությունը կազմված էր քրդերից և համիդյան «գուլումի» տարիներին հաստատված թուրքերից:

**Բուլանուխը** ոչ միայն Բիթլիսի նահանգի, այլև Արևմտյան Հայաստանի առավել հայաշատ և խիտ բնակեցված գավառներից էր: 17-րդ դ. սկզբին Իրանի Շահ-Աբաս Ա-ի կազմակերպած բռնագաղթի արդյունքում գավառից հազարավոր հայեր էին քշվել Պարսկաստանի խորքերը (Փերիայի գավառ): Չնայած դրան՝ մինչև 19-րդ դ. կեսերը Բուլանուխում պահպանվել էին անգամ հայկական ինքնավարություններ՝ **Լիզի** (պատմական **Լիծն**) և **Յոնջալուի (Առվտնոց)** մելիքությունների տեսքով: Առանձնակի հռչակ ուներ **մելիք Բորոն (Պորո)**, որի տրամադրության տակ է եղել **Լիզի** ամբողջը (**Լգաբերդ**): Սակայն 18-րդ դ.-19-րդ դ. 1-ին քսանամյակին **Խնուսի, Մանազկերտի** և **Մուշի** քուրդ ավատատերերի մշտապես կրկնվող միջցեղային ռազմական բախումներն ու վայրագությունները ծանր հետևանքներ ունեցան գավառի համար: Պակասը լրացրեց 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմին հաջորդած արևմտահայերի մեծ գաղթը, որն ընդգրկեց նաև **Բուլանուխի** գավառը: Խուսափելով քրդերի բռնություններից՝ հարյուրավոր հայ ընտանիքներ տեղափոխվեցին Արևելյան Հայաստան ու հաստատվեցին ժամանակակից ՀՀ-ի **Ապարանի (Արագածոտնի** մարզ) և **Մարտունու (Գեղարքունիքի** մարզ) շրջաններում: Սրա հետևանքով Բուլանուխը գրեթե ամբողջությամբ ամայացավ: Միայն հետագա տասնամյակներին տեղի առանձին քուրդ բեկեր, ելնելով տնտեսական շահերից, հարևան գավառներից (**Խլաթ, Խնուս, Մուշ**, անգամ՝ **Սասուն, Բշերիկ**) մեծ թվով հայերի հրավիրեցին Բուլանուխ, որի շնորհիվ վերջինս կրկին մարդաշատ դարձավ: Այստեղ զգալի թվով հայեր հաստատվեցին նաև 1890-ական թթ. համիդյան ջարդերի ժամանակ, ինչպես Բիթլիսի նահանգի հարավ-արևելյան **Խիզան, Մամոտանք, Սպարկերտ**, այնպես էլ Վանի նահանգի **Մոկս** գավառներից: Այնուամենայնիվ, օգտվելով հայերի արտագաղթից՝ գավառի որոշ հատվածներ, մասնավորապես Ներքին Բուլանուխի մի շարք գյուղեր, լցվեցին նստակեցության անցած քրդերով: Այդ գործընթացում իր բացասական դերակատարումն ունեցավ 1850-1860-ական թթ. **Բիթլիսի** քրդերի շրջանում մեծ հեղինակություն վայելող շեյխերի մի քանի ընտանիքների հաստատումը գավառի **Ապրի** և **Լաթար**

գյուղերում, ինչն ավելի խթանեց եկվորների ներհոսքը: Միաժամանակ, 1860-ական թթ. կեսերից թուրքական իշխանությունների բացահայտ խրախուսմամբ Բուլանուխի տարածքում «մուհաջիրների» («գաղթականներ») կարգավիճակով սկսեցին վերաբնակվել կովկասյան լեռնականներ («չերքեզներ»): Վերջիններս արդեն 1880-ական թթ. որոշակի թիվ էին կազմում գավառի **Բերդակ-Ղարաղըլ, Թեղուտ, Ուսնչոր (Յոթնչորք)** գյուղերում: Ավելին, օգտվելով իրենց արտոնյալ դիրքից, կովկասցիները զավթեցին **Կոպո** կամ **Քոփո** գյուղը՝ վտարելով բնիկներին (տե՛ս ստորև): Նշենք նաև, որ 1877-1878 թթ. ռուս-թուրքական հերթական պատերազմից հետո, այստեղ որպես «մուհաջիր», հայտնվեցին ղարափափախ թյուրքեր (Ռուսաստանին անցած **Կարսի մարզից**): Բնականաբար, օտար էթնիկական տարրերի մուտքը բացասաբար ազդեց Բուլանուխի ազգաժողովրդագրական նկարագրի վրա: Այս երևույթն առանձնակի լայն կերպով նկատելի էր **Ներքին Բուլանուխում**, ուր բնակչության էթնիկական կազմի աղավաղումն առավել մեծ չափեր էր ընդունել: Սրանով հանդերձ՝ հայերը **Բուլանուխում** իրենց գերակշռությունը պահեցին ընդուպ մինչև Առաջին աշխարհամարտ: 1914 թ. նրանց թիվը կազմում էր 26500-27000 մարդ կամ ողջ ազգաբնակչության շուրջ 68 %-ը:

**Բուլանուխում** թուրքական կանոնավոր բանակի և քրդական «համիդիե» հրոսակների հակահայկական խժոժությունները սկսվեցին 1915 թ. գարնանը: **Վերին Բուլանուխում** ՀՅԴ մարտական խմբերի եռանդուն գործողությունները և հարևան **Մանազկերտի՝** ռուսական բանակի կողմից գրավումը, հնարավորություն ընձեռեցին մի քանի վայրերում ինքնապաշտպանություն կազմակերպել: **Կոփի** երիտասարդների մի մեծ խումբ գրավեց պետական զինապահեստը և բռնագրավված զենքով արժանի հակահարված տվեց գյուղաքաղաք ներխուժել փորձող տխրահռչակ ավազակապետեր Մուսա և Խասըմ (Ղասըմ) բեկերի ջոկատներին: Առանձնապես աչքի ընկավ երբեմնի մելիքանիստ **Յոնջալու** ավանի մարտական խումբը, որի ջաքերով հնարավոր եղավ փրկել ու առանց կորստի **Մանազկերտ** տեղափոխել ոչ միայն տեղի, այլև հարևան **Ուսնչոր** և **Թեղուտ** գյուղերի հայ ընտանիքներին: Հիրավի հերոսական էր Բուլանուխի հյուսիս-արևմտյան **Բերդակ-Ղարաղըլ** բազմամարդ գյուղի հայության դիմադրությունը: Վերջինիս 1600-ի հասնող բնակչությունն իր ողջ ունեցվածքով (ներառյալ ընտանի կենդանիները), ապրիլի վերջին փոխադրվեց **Արածանու** հոսանքի երկճյուղման հետևանքով առաջացած ու խիտ եղեգնուտներով պատված մոտակա կղզյակը և մոտ 2 շաբաթ համառ դիմադրությամբ, հետ մղեց քուրդ հրոսակների հարձակումները: Ի վերջո, **Կոփի** և **Յոնջալուի** մարտական ջոկատների օգնությամբ, պաշարվածներին նույնպես հաջողվեց անցնել **Մանազկերտի շրջան՝** տալով համեմատաբար թեթև կորուստներ (55-60 սպանված և անհետ կորած): Ճիշտ է, **Վերին Բուլանուխում** եղան նաև խիստ տուժած գյուղեր: Գավառի հյուսիս-արևմտյան **Խնուսին** սահմանակից **Համգաշեյխ** և **Շիրվանշեյխ** գյուղերը, ենթարկվեցին վայրագ կոտորածի (գոհերի ընդհանուր թիվը՝ ավելի քան 600 մարդ, որոնց մեծ մասին ջարդարարները ողջ-ողջ նետել էին **Արածանու** վրա գտնվող **Զուղրի** կամրջից): Այնուամենայնիվ, ինք-



6	Խաչու	Եկեղեցի		Տեղադրված էր <b>Խաչու</b> կամ <b>Խազանա</b> լճակի հարավային ափին: Լճակում կային 2 փոքրիկ կղզակներ, որոնցից մեկի վրա նշմարելի էին բերդի մնացորդներ: Ըստ ժողովրդական ավանդագրույցի, այդ լճակի մեջ էր նետվել գավառի ավանդական կառավարիչ <b>Պողոթն «Քազավորի»</b> պողպատե հրեղեն («հավլունի») թուրը, որը պահվում էր ջրային <b>քաջերից</b> մեկի մոտ: Գյուղը հայտնի էր ուշագրավ ճարտարապետությամբ կառուցված <b>Սբ Կարապետ</b> վանքով: Հարևանությամբ գտնվում էր <b>Խազան</b> գյուղատեղին: <b>Խաչուից</b> շուրջ 2 կմ հվ-արևմուտք գտնվող երբեմնի հայաբնակ <b>Վանքձոր</b> կամ <b>Վանքիձոր</b> (թրդ.՝ Vongesor) գյուղում պահպանվել էր ավերակ եկեղեցի:
7	Խարաբաշեհիր (Խրաբաշար, Հայկաշեն)	Սբ Աստվածածին	1	Թրք. նշանակում է «ավերակ քաղաք» (Harabesehir): Գյուղը գտնվում էր <b>Խաչլվա լճակի</b> արևմտյան ափին ընկած մի հնագույն բնակատեղիի մոտ, որը սովորաբար նույնացվում է <b>Հայկ Նահապետի</b> կողմից պատմական <b>Հարք</b> գավառի տարածքում կառուցված <b>Հայկաշեն</b> ավանի հետ: 19-րդ դ. վերջին-20-րդ դարի սկ. հնավայրում հայտնաբերվել էին կավե խողովակներ, ոռոգման համակարգի մնացորդներ: Ուշագրավ է, որ գյուղի մոտ հայտնի էր « <b>Էգեստան</b> » ( <b>Այգեստան</b> ) վայրը, ուր ավանդաբար գտնվել են <b>Հայկաշենի</b> այգիները: Այս վայրում ևս հայտնաբերվել էին հնագույն խաղողի վազերի մնացորդներ:
8	Կոփ (Կոպ, Կողբ), գ-քաղաք	Սբ Աստվածածին կամ Մայր Աստվածածին (Սբ Հակոբ), Սբ Թուխ Մանուկ	1	Գոյություն է ունեցել ևս մեկ՝ չգործող, եկեղեցի ( <b>Սբ Գևորգ</b> ), ինչպես նաև <b>Սբ Ստեփանոս</b> անունով մատուռ: Հայերն ունեին գրադարան-ընթերցարան, ուր ստանում էին նաև առանձին պարբերականներ: <b>Կոփի</b> մոտակայքում գտնվող <b>Գոնկլիկ</b> սարի գագաթին կար «սուրբ», որը հայտնի ուխտատեղի էր:
9	Համզաշեյս (Համզաշեյս)	Սբ Աստվածածին	1	Դպրոցը գտնվում էր նորակառույց երկհարկանի շենքում: Կից գործել է համազյուղացի <b>Միսաք Իսոյանի</b> ջանքերով բացված գրադարան-ընթերցարան՝ շուրջ 1000 կտոր գրականությամբ: Ստացել են նաև 4 անուն թերթ: Գյուղում եղել է <b>Թուխ Մանուկ</b> ուխտատեղի (որոշ աղբյուրներում նշվում է որպես եկեղեցի): <b>Համզաշեյսում</b> պահվել են 3 <b>Ավետարան</b> (փրկվել էր միայն <b>Մերկերիոսի Ավետարանը</b> , մյուսները, որոնցից 1-ը կոչվել է « <b>Ծաղիկ</b> »՝ ոչնչացվել են), ինչպես նաև՝ <b>Նարեկ</b> (նույնպես ոչնչացված): Գյուղից շուրջ 4 կմ արմ գտնվող <b>Տոն</b> կամ <b>Դոն</b> գյուղակը ենթադրաբար նույնացվում է 14-րդ դ. հիշվող <b>Դոնեվանք</b> (այլ ընթերցմամբ՝ <b>Դոնեվանք</b> ) գյուղի հետ՝ <b>Սբ Աստվածածին</b> եկեղեցիով: <b>Համզաշեյսը</b> Բուլանուխի բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1300 հայ բնակչով:



10	Ղարաղըլ (Խարաղըլ, Բերդակ)	Սբ Աստվածածին, Սբ Հակոբ	1	Գյուղում պահվել են ձեռագիր մատյաններ՝ <b>Աստվածաշունչ</b> (եկեղեցում) և 4 <b>Ավետարաններ</b> (անհատների մոտ): Գյուղի հայեցի անունը ձևով ենթ մոտակա լճակի շնորհիվ, որն առ այսօր հայտնի է <b>Բերդակ</b> (թրք.՝ Pertek) անունով: Շուրջ 4 կմ հս գտնվող <b>Մեխիկ (Մխիկ)</b> գյուղը նախկինում հայաբնակ էր: <b>Ղարաղըլը</b> Բուլանուխի խոշոր գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1600 հայ բնակչով:
11	Մեջիթլու (Մաշտրլու, Լիճ)	Սբ Լուսավորիչ, Սբ Սարգիս	1	Գյուղում հայտնի էին <b>Սբ Աստվածածին, Թուխ Մանուկ</b> և <b>Սբ Հովհաննես</b> (վերջինիս կից կար սրբազան անտառակ) մատուռ-ուխտատեղիները: Գյուղում պահվել են ձեռագիր « <b>Շեկ</b> » և « <b>Գենձե</b> » <b>Ավետարանները</b> (վերջինիս ուխտի էին գալիս): <b>Մեջիթլուն</b> Բուլանուխի բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1000 հայ բնակչով:
12	Միրբար (Մերբար, Միրիբար)	Սբ Ստեփաննոս	1	Մոտակայքում պահպանվել էին վանքի ավերակներ: Գյուղի շրջակա բլուրների վրա երևում էին 2 լքված բերդերի մնացորդներ, որոնք ըստ ավանդության, ժամանակին պատկանել են 2 եղբայրների և միացված են եղել կամրջով: Նրանցից մեկին կոչել են <b>Միրդաա</b> (« <b>Միրդաա</b> ») և, չի բացառվում, որ գյուղանունը որոշակի կապ ունենա այդ անձանավան հետ:
13	Յոնջալու (Առվտնոց)	Սբ Աստվածածին	1	Գյուղում պահվել է « <b>Սուրբ Գևորգ</b> » անունով ձեռագիր <b>Ավետարանը</b> : <b>Կոփ</b> տանող ճանապարհին գտնվում էր « <b>Թաթոս Առաքյալ</b> » ուխտավայրը: 18-րդ դ.- 19-րդ դ. 1-ին տասնամյակներին հայկական մելիքության կենտրոն էր (տես վերը): Գյուղի գերեզմանատանը պահպանվել էր սեպագիր արձանագրությամբ քար: Բուլանուխի խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 2200 հայ բնակչով:
14	Շեյխաղուբ (Շեխաղու, Շուշանավանք)	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ	2	Դպրոցներից մեկը՝ բողոքական համայնքին էր: Գյուղում կար <b>Թուխ Մանուկ</b> ուխտատեղի (առանձին աղբյուրներում՝ եկեղեցի): Գյուղում անհատ անձանց մոտ պահվել են 6 ձեռագիր <b>Ավետարաններ</b> : Բուլանուխի բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1500 հայ բնակչով:
15	Շիրվանշեյխ (Շիրվանշեյխ)	Սբ Աստվածածին (Սբ Մինաս)	1	Գյուղի մոտ գտնվում էր <b>Սբ Հակոբ</b> անայի վանքը: Բուլանուխի բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1150-1200 հայ բնակչով:
16	Ոտնչոր (Հոտնչոր, Յոթնչուր)	Սբ Աստվածածին, Թուխ Մանուկ	1	Գյուղում և շրջակայքում կիսավեր կամ ավերակ վիճակում պահպանվել էին <b>Սբ Լուսավորիչ, Սբ Հովհաննես</b> և <b>Սբ Ստեփաննոս</b> եկեղեցիները: Գյուղում անհատ անձանց մոտ, պահվել են արծաթակազմ և ոսկեգիր <b>Ամենափրկիչ, «Ծաղիկ», «Կանաչ»</b> և « <b>Կարմիր</b> » <b>Ավետարանները</b> : Մոտակա գյուղատեղիում պահպանվել էին խաչքարեր: Գյուղանունը կապվում է շրջակայքում բխող սրբազան յոթ աղբյուրներից (« <b>Յոթնչուրք</b> » > « <b>Ոտնչոր</b> », բարբառային « <b>Հոտնչոր</b> »): Գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1300 հայ բնակչով:

17	Սուրբ Դանիել, վանք		1	Բուլանուլիի նշանավոր մենաստանի «մեզրե»- ազարակն էր: Վանքը, որը հայտնի էր նաև <b>Կոփավանք</b> անու-նով, գտնվում էր <b>Կոփ</b> գ-քաղաքից շուրջ 4 կմ հվ-արևելք, բարձրադիր վայրում և պարսպապատ էր: Ըստ ավանդու-թյան <b>Սբ Դանիելը</b> հիմնադրել է <b>Սբ Գրիգոր Լուսավորիչը</b> («Լուսավորչաշեն»): Վանքի մոտակա մատուռը համարվում էր 4-րդ դ. հայտնի եկեղեցական գործիչ <b>Սբ Դանիել Ասորու</b> ձգնարանը: 347թ., նահատակվելով <b>Տիրան Արշակունի</b> արքայի հրամանով, <b>Սբ Դանիելը</b> թաղվել է վանքում, որը հետադուր կոչվել է նրա անունով («յանուն <b>Սբ Դանիելի</b> , ծերին <b>Ասորու</b> »): Մենաստանում էին գտնվում ինչպես վերոհիշյալ սրբի, այնպես էլ <b>Սբ Աստվածածնի</b> վկայարանները, որոնք հայտնի ուխտատեղիներ էին: Պահվել է սրբացված ձե-ռագիր <b>Ավետարան</b> : Մինչև Մեծ եղեռն գործել է վանական դպրոց: <b>Սբ Դանիելի</b> վանքը գտնվում էր <b>Սշո Սբ Կարապետի</b> հոգևոր տես-չության ներքո: Մենաստանի մերձակայքում էր գտնվում ավանդական <b>Պողոշ</b> «թագավորին» վերագրվող բերդը (քրդ.՝ Qalé hoşik):
18	Տրտոփ (Տերտոփ)			
19	Փիրան	Սբ Ստեփաննոս  (Սբ Հովհաննես)		<b>Փիրանից</b> շուրջ 3,6 կմ հվ-արևմուտք գտնվող <b>Մելիսիկ (Մելիսիկ-Փիրան)</b> գյուղը նախկինում հայաբնակ է եղել:
20	Քաթաղու (Քեքերլի, Քյաֆարլու)	Սբ Գևորգ	1	Գյուղի առանձին բնակիչների մոտ պահվել են ձեռագիր մատյաններ՝ « <b>Ցագըչու</b> » և « <b>Սուրբ Ստեփանոս Ավետարանները</b> , « <b>Կարմիրկող Նարեկը</b> »: <b>Քաթաղուն</b> Բուլանուլիի խոշոր գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1600 հայ բնակչով:
<b>բ. Ներքին Բուլանուլս</b>				
1(21)	Ագրակ (Հակոակ)	Սբ Հովհաննես		Գյուղից արմ՝ <b>Բուլանուլսի</b> և <b>Վարդոյի</b> սահ-մանագլխին բարձրացող <b>Կուլիբաբա (Խոյլի-բաբա, Խալիլբաբա, 2584 մ)</b> անտառապատ լեռնագագաթին գտնվում էր նշանավոր ուխ-տավայր՝ բուժիչ սրբազան աղբյուրով: Հատ-կանաշական է, որ վերջինիս շրջակա ծառե-րը ևս սրբացված էին, իսկ դրանք հատելն՝ արգելված:
2(22)	Ապրի (Հապրի, Ապրե)	Սբ Գևորգ,  Սբ Հակոբ		<b>Սբ Հակոբ</b> եկեղեցում ամփոփված էին այդ հոչակավոր սրբի մասունքները: Գյուղում պահվել է ձեռագիր « <b>Կարմիր Ավետարանը</b> »: Բնակավայրում հաստատված քուրդ շեյխե-րի տոհմը (« <b>օջախ</b> »), որին վերագրվում էր հունական (հայ-քաղկեդոնական) ծագում, հարգի էր ոչ միայն ցեղակիցների, այլև հա-յերի շրջանում: Ի դեպ, <b>Ապրիի</b> ջամին (մահ-մեղական սրբավայրը) նախկինում հայկական եկեղեցի է եղել: Գյուղի շրջակայքը հայտնի էր մի շարք հնավայրերով: Հս-արևելքում « <b>Կարմիր վանք</b> » ուխտատեղին էր: Հարավում երևում էր գյուղատեղի, ուր խաչքարեր էին պահպանվել:

3(23)	Առնջիկ (Հառնջիկ)			Շրջակա երբեմնի հայաբնակ գյուղերից էին՝ <b>Խերգիս, Հարսնաղբյուր</b> (քրդերը թարգմանել էին <b>Kanibük</b> ), <b>Շարուր (Շալուր)</b> :
4(24)	Ատկոն (Ատկոնք, Հատկոն)	Սբ Աստվածածին	1	Բուլանուխի բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1000-1200 հայ բնակչով:
5(25)	Բրգաշեն (Փրքաշեն, Փրկաշեն)	Սբ Աստվածածին		
6(26)	Գյաբուլներ (Գյաբուլան, Եզնաշատ)	եկեղեցի		Գյուղում պահվել է « <b>տեր Դավթի Ավետարան</b> » ձեռագիրը:
7(27)	Լիզ (Լիծ)	Սբ Աստվածածին	1	Դպրոցը՝ <b>Մամիկոնյան</b> : Գյուղին կից երևում էր կիսավեր <b>Լգաբերդը</b> : 18-րդ դ.-19-րդ դ. սկ. հայկական մելիքության կենտրոն էր: Բուլանուխի խոշոր բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 2000 հայ բնակչով:
8(28)	Խոշգյաղի (Խոշգեղի)	Սբ Աստվածածին	1	Բուլանուխի բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1500 հայ բնակչով:
9(29)	Կողակ	Սբ Աստվածածին (Երեք Խորան)	1	Մոտակա <b>Գրքներ</b> բարձունքին գտնվող մատուռն ուխտատեղի էր ինչպես հայերի, այնպես էլ քրդերի համար:
10(30)	Կոպո (Քոփո)	եկեղեցի		Գյուղը հայաբնակ էր մինչև 1870-ական թթ., երբ թուրքական իշխանությունների կողմից այստեղ բնակեցվեցին կովկասյան լեռնականներ («չերքեզներ»): Վերջիններս, աստիճանաբար զավթելով հայերի հողերը, ստիպեցին բնիկներին (շուրջ 60 տուն) հեռանալու <b>Կողակ</b> , թեև դեռ երկար ժամանակ հայերը շարունակում էին վճարել խված գյուղի հարկերը:
11(31)	Մոլլաքենդ (Մալաքյան, Չորագյուղ)	Սբ Հակոբ		
12(32)	Շեյխվալի (Շեյխվոլի)	Սբ Թուխ Մանուկ		
13(33)	Փիոնք (Բիոնք)	Սբ Գևորգ Զորավար		Մոտակայքում՝ նույն անունը կրող լեռնաշղթայի հարավային ստորոտին, երևում էին <b>Բլեջանի բերդի</b> ավերակները:

## 2. Մանազկերտի գավառ

### Ա/ Մանազկերտ գյուղաքաղաք

Գավառի համանուն կենտրոնը (թրք.՝ **Malazgirt**) Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն էր, որը ժողովրդի շրջանում ավելի հայտնի էր **Բերդ** անունով: Գտնվում էր **Արածանի-Մուրատից** շուրջ 3 կմ հարավարևելք՝ գետի ձախափնյակում: Բնակավայրի պատմական անվանումը (հնում՝ **Մանաուազակերտ**, զարգացած միջնադարում՝ **Մանծիկերտ** կամ **Մանծկերտ**) կապվում է **Մանավազյան** նախարարական տոմի հետ, որի կենտրոնն էր մինչև 4-րդ դ.: Այս տոհմանունը որոշակի կապ ունի **Մենուա (Մենուաս)** հայտնի արքայանվան հետ: 20-րդ դարասկզբին պահպանվել էր պատմական քաղաքի միջնաբերդը՝ շրջապարսպի ավերակներով (կանգուն մի քանի բուրգերի վրա երևում էին հայերեն արձանագրու-

թյուններ): Գյուղաքաղաքի հնագույն եկեղեցիներից էին դեռևս 10-րդ դարում հիշատակվող **Երեքխորան Սուրբ Աստվածածինը** և **Սուրբ Սարգիսը**, որը տեղի մահմեդականները կոչում էին Arabkilisesi (վերջինիս ներսում դեռ նկատելի էին որմնանկարների հատվածներ): Սյուս եկեղեցիներն էին **Սուրբ Հակոբը** և **Սուրբ Կարապետը** (հիշվում է նաև **Սուրբ Մինասը**): **Մանազկերտի** հայտնի պատմական հուշարձաններից նշանավոր էին մզկիթի վերածված «**Մայր եկեղեցին**», որի շրջակայքում 1880-ական թթ. դեռ երևում էին տապալված խաչքարեր, երբեմնի **Սուրբ Ներսես** մենաստանը (գյուղաքաղաքից դուրս, 20-րդ դարակազմին վերածվել էր մատուռի), կիսագետնափոր մի եկեղեցի, որի անունը մոռացվել էր: Մանազկերտի տարբեր հատվածներում կային մի քանի **Թուխ Մանուկ** սրբավայրեր, որոնց մի մասի վրա պահպանվել էին սեպագիր արձանագրություններ: Գյուղաքաղաքի կենտրոնական մասում պահպանվել էին միջնադարյան բաղնիքների և ձիթահանքերի մնացորդներ (կոչվել են «առատանոց», որոնցից մեկը՝ **Սուրբ Սարգսին** կից, հիշվում է 10-րդ դարով թվագրվող **Խուրթի Սուրբ Աղբերիկ-Վանդիկ վանքի** կոնդակում): **Մանազկերտից** մի փոքր արևելք պահպանվել էր **Սուրբ Դանիել** հայտնի ուխտավայրը, որին այցելում էին ինչպես հայերը, այնպես էլ քրդերը: Մատուռի շրջակայքը հարուստ էր բազմաթիվ պատկառելի չափերի հասնող խաչքարերով, որոնց մի մասը պատրաստված էր նրբաձաշակ արվեստով: Հավանաբար **Սուրբ Դանիելի** մոտակայքում է գտնվել 14-րդ դ. 1-ին 30-ամյակին հիշատակվող **Գումբայթ** (իմա՝ **Գմբեթ**) բնակավայրը («ի գեաւղս, որ անուամբ կոչի **Գումբայթ**, ընդ հովանեաւ **Սրբոյ Աստուածածնի** և **Սրբոյն Դանիէլի**»): **Մանազկերտ** գյուղաքաղաքը 20-րդ դ. սկզբին ուներ ավելի քան 500 տուն կամ 4000-4200 բնակիչ (գերազանցապես՝ հայեր և քրդեր, փոքրաթիվ թուրքեր): Սակայն 1903 թ. ապրիլի աղետալի երկրաշարժը հիմնիվեր կործանեց **Մանազկերտը**: Զոհվեց գավառակենտրոնի բնակչության շուրջ 1/3-ը՝ 1400 մարդ: Կործանված շինությունների շարքում էին նաև հայկական եկեղեցիները, բացառությամբ **Սուրբ Սարգսի**: Ահռելի էին ավերածությունները նաև **Մանազկերտի** և շրջակա որոշ գավառների գյուղական բնակավայրերում: Աղետն այնքան ահավոր էր, որ գավառի կենտրոնը ժամանակավորապես տեղափոխվեց **Ռստամգյաղուկ** ավան (**Մանազկերտից** շուրջ 21 կմ արևմուտք՝ **Արածանու** ձախ ափին): Երկրաշարժը նկատելիորեն ամայացրեց գյուղաքաղաքը, որի բնակչության թիվը 1914 թ. չէր գերազանցում 2500-ը, որից 950-1000-ը՝ հայ:

## Բ/ Գավառը

**Մանազկերտի** գավառը գրավում էր Բիթլիսի (Բաղեշ) նահանգի հյուսիսային հատվածն ընդգրկող **Արածանի-Մուրատի** միջին ավազանը: Մինչև 1880-ական թթ. գավառի մեջ են մտել **Արածանու** հունի երկայնքով փռված արգավանդ **Մանազկերտի** դաշտը (պատմական **Օշական** դաշտ, քրդ.՝ Hâftîrâng-«յոթներանգ»), նույն գետի աջակողմյան **Խնուս** և ձախակողմյան **Արքայաջուր** (**Փաղիշահ** կամ **Բաղիշան**) վտակների գետահովիտները, ինչպես նաև **Սիփան** լեռնազանգվածից հյուսիս ընկած հրաբխային նոսր բնակեցված սարահարթը, որը ժողովուրդը կոչում էր «Մա-

**նազկերտի քրռեն»** (իմա՝ «քարքարուտ», «քարակույտերով լեցուն տա-րածք»): 1880-ական թթ. վերջին գավառին միացվեց նաև **Արածանու** հյուսիսային **Տվարածատափ-Ալմալուղերե** վտակի ավազանի արևմտյան մասը, որով էլ ավարտվեց վարչամիավորի սահմանների ձևավորումը:

20-րդ դարասկզբին **Մանազկերտի** գավառը սահմանակից էր հյուսիսից, **Բագրևանդի** կամ **Շեռյանի** լեռներով՝ **Ալաշկերտին** (Էրզրումի նահանգ), արևելքից, **Խաթավին** կամ **Կարտևան** լեռնազանգվածով (2256 մ)՝ **Դութաղ-Բաղնոցին** (կրկին Էրզրումի նահանգ), հարավ-արևելքից, **Սիփանի** նախալեռներով՝ **Արծկե-Ալջավազին** (Վանի նահանգ), հարավից՝ **Խլաթին** և **Բուլանուխին**, իսկ արևմուտքից՝ **Խնուսին** և **Բասենին** (Ղարայազի գոգավորությամբ):

Ընդհուպ մինչև 18-րդ դ. կեսերը **Մանազկերտի** գավառը Հայաստանի առավել խիտ բնակեցված գավառներից էր: Թեև քաղաքական իշխանությունը գտնվում էր անվանապես **Էրզրումի** կամ **Բայազետի** փաշաներին ենթակա եկվոր քուրդ բեկերի ձեռքին, սակայն հայերը կազմում էին բնակչության գերակշիռ մեծամասնությունը: Ավելին, գավառի տարածքում ևս պահպանվել էին (մինչև 19-րդ դ. 1-ին 30-ամյակը) հայկական մելիքություններ և ինքնավար համայնքներ: Առանձնակի հռչակ էր վայելում **Տվարածատափի** ստորին հոսանքի շրջանում (այդ մասում՝ **Կեսիկի ջուր**) գտնվող **Հասանփաշա** կամ **Հսենփաշեն** գյուղի մելիք **Խչեն** (**Խաչո**), որը 19-րդ դ. 10-20-ական թթ. մեծ ազդեցություն ուներ ոչ միայն բուն **Մանազկերտում**, այլև ողջ **Բաղնոցի** (զարգացած միջնադարում՝ «**Որնու** կամ **Ուրնու երկիր**») և **Բագրևանդի** (**Ալաշկերտ**, **Դութաղ**, **Նահիա**) գավառներում: Հատկանշական է, որ մելիքական այս տոհմի («**Խչոյի տուն**») անդամներն ունեցել են արծաթապատ «**լաքազաններ**», որոնք, կարծում ենք, մելիքական իշխանության յուրատեսակ խորհրդանիշներ էին: **Մելիք Խչեն** (**Խաչո**) մեծ հարստության տեր էր: Նրան են պատկանել հսկայական հոտեր, նախիրներ, ձիթահանքեր, ջրաղացներ, անգամ՝ աղահանք, որը 19-րդ դ. վերջին դեռ կոչվում էր նրա անունով (ի դեպ, **Մանազկերտի** գավառի հյուսիս-արևմտյան՝ **Խնուսին** սահմանակից հատվածն աչքի էր ընկնում մի քանի խոշոր աղահանքերով): Հայկական ինքնավար համայնք կար նաև **Մանազկերտի** արևելյան **Փինյանիշ** (**Բանանիշ**) գյուղում (19-րդ դ. կեսերին արդեն հայաթափված էր), ուր ժառանգաբար իշխել են **Նոյբեկի** տոհմի ներկայացուցիչները:

18-րդ դ. կեսերից նորանոր քրդական ցեղերի մուտքը գավառի տարածք աղետալի հետևանքներ ունեցավ: Արոտավայրերի համար մղվող միջցեղային չընդհատվող բախումները, որոնք ուղեկցվում էին **Մանազկերտի** և **Խնուսի** բեկերի միջև երկար տարիներ ընթացող արյունալի կռիվներով, գրեթե ամբողջությամբ ամայացրին գավառը՝ ծանր հարված հասցնելով առաջին հերթին տեղի հայությանը: Քրդական վայրագություններից խուսափելու համար մեծ թվով մանազկերտցի հայեր ստիպված էին հեռանալ այլևայլ վայրեր: Արդյունքը տասնյակ բնակավայրերի ամայացումն էր, որոնք 1830-1840-ական թթ. թուրքական իշխանությունների կողմից զանգվածաբար սկսեցին վերաբնակեցվել հիմնականում **հասանան** ցեղի (հայկական աղբյուրներում՝ «**հասնանցի**») և նրա առան-

ձին ստորորբաժանումներին պատկանող (քրդ.՝ qâbilê) քրդերով: Սա հիմնովին փոխեց գավառի ազգացեղային նկարագիրն ի վնաս հայերի, և 1870-ական թթ. եկվորներն արդեն կազմում էին բնակչության մեծամասնությունը: Միայն 1880-ական թթ. վերջից, **Խիզան, Սպարկերտ, Մամուտանք** գավառներից դեպի Բիթլիսի նահանգի հյուսիսային շրջաններ սկիզբ առած հայերի ներքին տեղաշարժերի շնորհիվ, **Մանազկերտի** գավառի մի ամբողջ շարք բնակավայրեր վերահայացան կամ բազմամարդ դարձան: Այս երևույթով պայմանավորված՝ նկատելիորեն աճեց գավառի հայ բնակչության թվաքանակը՝ 1914 թ. կազմելով ավելի քան 13000 մարդ (բնակչության 1/3-ը): Ընդ որում, հայ բնակչության գերակշիռ մեծամասնությունը տեղաբաշխված էր **Մանազկերտի** գավառի հարավային՝ **Արածանի-Մուրատի** գետահովտի գյուղերում, որոնց շարքում հանդիպում էին նաև խոշոր, բազմամարդ ավաններ (տես ստորև): Հարկ է նշել, որ 1860-ական թթ. **Մանազկերտի** որոշ գյուղերում օսմանյան իշխանությունների աջակցությամբ հաստատվել էին նաև կովկասյան լեռնականներ (գերագանցապետ՝ մահմեդական օսեր):

1915 թ. ապրիլին, ռուսական բանակի սրընթաց առաջխաղացման շնորհիվ գավառի հայ բնակչության մեծագույն մասը խուսափեց զանգվածային կոտորածից և փրկվեց՝ համեմատաբար փոքրաթիվ կորուստներով (շուրջ 100 սպանված՝ հիմնականում **Տվարածատափ-Ալմալուդերում** և **Բաղնոցին** սահմանակից գյուղերում): Սակայն հուլիսյան նահանջը ամայացրեց **Մանազկերտի** տարածքը, ընդ որում այս անգամ հայերն ունեցան շատ ավելի ծանր կորուստներ: 1916-1917 թթ. գաղթականների որոշ մասը՝ կազմված գերագանցապետ տղամարդկանցից, աստիճանաբար վերադարձավ բնօրրան և վերականգնեց մի շարք բնակավայրեր: 1917 թ. աշնանը **Մանազկերտի** գավառի 3 տասնյակի հասնող գյուղերում արդեն ապրում էր 4000 հայ (մի մասն այստեղ վերաբնակված բուլանուլսցիներ էին): Սակայն 1918 թ. փետրվարի թուրքական հակահարձակումը նրանց ևս ստիպեց վերջնականապես լքելու բնօրրանը: Վերապրած մանազկերտցի հայերի սերունդներն այժմ բնակվում են ՀՀ-ի տարբեր շրջաններում:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ալակոր (Վալակոր)			
2	Ալյար			
3	Ակներ, Ներքին (Շեյթանավա)		1	
4	Ակներ, Վերին	Սբ Գևորգ	1	Մոտակայքում էր գտնվում ավերակ <b>Խանգար</b> կամ <b>Կարմիր վանքը</b> : Վանքին կից գտնվում էին հնագույն մեծյանի մնացորդներ: Հայերն այդ վայրը կոչում էին <b>Սեղանքար</b> , իսկ քրդերը՝ <b>Kâvre Kafiran</b> (իմա՝ «կռապաշտների կամ անհավատների քար»): Ջույզ <b>Ակներին</b> կից՝ <b>Արածանի</b> թափվող համանուն գետակի ափին, երևում էր <b>Մնջան (Մնձան, թրք.՝ Adasincan)</b> գյուղատեղին, ուր դեռ 19-րդ դ. 80-ական թթ. պահպանվել էր խաչքարերով գերեզմանատունը: Նշանավոր էր նաև այս շրջանում գտնվող հնագույն ջրաղացների շարքը, որոնց մի մասը (մեկ տասնյակից ավելի) գործում էր նաև 19-20-րդ դդ. սահմանագլխին:

5	Աշուր			
6	Ավթընա (Ջուրչկա)			14-րդ դ. հիշվում է գյուղի <b>Սբ Ստեփաննո Նախավկա</b> եկեղեցին («գերկիրս Ապահունեաց, ի գեղս յորջորջի <b>Ջուր չկա</b> , ընդ հովանեա <b>Նախավկայի</b> և արագահաս և կարող յամենայնի <b>Գեորգեայ Ջարավարի</b> »): Ի դեպ, գյուղի անունը հայերենից բառացի թարգմանվել է քրդերեն (քրդ. avtîna՝ «անջրդի» կամ «ջուր չկա»):
7	Բագրան (Բաքրան)	եկեղեցի		
8	Բանգղե (Բանգղեն, Բագգյուղ՞)	եկեղեցի	1	
9	Բաստան (Բաստրն)			
10	Բոյիչաբղուն			Շուրջ 4 կմ հս համանուն լճակի մոտ գտնվում էր <b>Ղազգյուլ</b> կամ <b>Կազգյուլ</b> գյուղը, որը, կարծում ենք, 12-րդ դ. հիշատակվող <b>Խազդուղք</b> բնակավայրն է՝ <b>Սբ Սիոն</b> եկեղեցիով («ի գեղս որ անուն կոչի <b>Խազդուղք</b> , և անուն եկեղեցական <b>Սբ Սիոն</b> և <b>Սբ Գեորգ</b> »):
11	Բոստանղայա (Բոստանխայա)	եկեղեցի (ավերակ)		Մոտակայքում պահպանվել էին <b>Սբ Գևորգ</b> վանքի ավերակները: Գյուղը նշանավոր է հյուսիսում բարձրացող բլրի վրա կառուցված Վանի թագավորության ժամանակաշրջանի ամրոցով: 19-րդ դ. վերջի-20-րդ դ. սկ. աղբյուրներում հանդիպող նկարագրությունների համաձայն, տարբեր կողմերից փորված աստիճանները հասնում էին մինչև գագաթ, ուր պահպանվել էին բազմաթիվ տապանաքարեր: Դրանց մեջ առանձնանում էր սև քարից պատրաստված և սեպագրերով պատված բավականին մեծղի մի քար, որը ժողովրդի շրջանում հայտնի էր « <b>Ազնավուրի գերեզման</b> » անունով լվերջինիս հետ կապված ավանդությունը գրանցված է <b>Գ. Սրվանձտյանցի Ս. Հայկունու</b> և <b>Սահակ Մոսեյանի (Բենսե)</b> կողմից): Հնավայրում տեսանելի էին նաև մատուռի ավերակներ, որի բեմի ներքնամասում պահպանվել էր մարմարից պատրաստված մի խաչքար: Մանագլերտի <b>Բաղնոցին</b> սահմանակից արևելյան մասում գտնվող <b>Մուլթանմուտ</b> երբեմնի հայաբնակ գյուղի մոտ մինչև 1870-ական թթ. գոյություն ուներ հայկական սրբավայր (վանք), որը քանդել էր այստեղ հաստատված քուրդ բեկերից մեկը:
12	Գերանլըղ (Քիրանլըղ)			
13	Դերիկ (Դերըկ)	Սբ Աստվածածին, Սբ Սարգիս	2	Մոտակայքում պահպանվել էր <b>Սբ Դանիել</b> կիսավեր վանքը ( <b>Դերըկի վանք</b> ) և խաչքարեր: Գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1000 հայ բնակչով:
14	Դուգնուկ (Դիգնուկ)	եկեղեցի	1	Մոտակայքում պահպանվել էին <b>Սբ Սարգիս</b> նույնանուն ավերակ վանքերը:
15	Եկմալ	եկեղեցի	1	Մոտակայքում՝ վանքի ավերակներ:
16	Զրքռաշ			
17	Զոմիկ, Ներքին			Չենք բացառում, որ նույնանուն այս 2 գյուղերը համընկնում են պատմական <b>Ծումբ</b> կամ <b>Ծմբոյ</b> գյուղին ( <b>Ծում+բ</b> > քրդ.՝ <b>Zom+ik</b> ):

18	Ջոմիկ, Վերին			
19	Թաշկան (Տաշխուն)			
20	Թարխտ (Դարկոտ, Թեղուտ)			
21	Թոնդրակ (Թոնդրաս)	Սբ Կարապետ	1	Մոտակայքում պահպանվել էին <b>Սբ Հովհաննես</b> վանքի ավերակները: 9-րդ դ. 1-ին կեսին <b>թոնդրակեցիների աղանդի</b> (Սմբատ Ջարեհավանցու կողմից հիմնադրված կենտրոնն էր):
22	Իկնախոջա (Այնախոջա, Էքնախոջա, Այնախաս՝)	եկեղեցի	1	Մոտակայքում կային վանքի ավերակներ:
23	Ինդրիզիզեղ			
24	Խանիզեղ (Գոնդախանե)			
25	Խանիկ (Խանըկ, Թոռլու)			
26	Խան-օղլի	եկեղեցի	1	Մոտակայքում կային վանքի ավերակներ:
27	Խարաբա Ղասմիկ (Խասմիկ)	եկեղեցի	1	Մոտակայքում կային վանքի ավերակներ:
28	Խարաբակորըք			
29	Խոթանլու (Գոթանլու)	Սբ Կարապետ (նախկինում՝ վանք)	1	Շրջակայքում էր գտնվում <b>Սբ Հովհաննես Բերանի</b> կիսավեր վանքը:
30	Խոշաջին			
31	Կանիսպի			
32	Կանիկոր			Մոտակայքում կային մենաստանի ավերակներ:
33	Կուշտիան (Կոշտյան, Կոստեանք՝)			
34	Հաջիրոթ(ի)	եկեղեցի		
35	Հասան փաշա (Հսենփաշեն)			
36	Հասուններ (Հասունան)			
37	Հասպետաշ			
38	Հրսե (Հրսեն, Արսե)			14-րդ դ. հիշվում է գյուղի <b>Սբ Ստեփանոս</b> եկեղեցին («ընդ հովանեաւ Սրբոյ Ստեփանոս Նախավկայի և ամենակարող երագահաս Սրբոյ Ջարավարին Գէորգեայ»): Մոտակայքում պահպանվել էին նաև վանքի ավերակներ:
39	Ղամբշլի (Խամբշլի)			
40	Ղասմիկ (Ըռզի Խասմիկ)	Սբ Թուխ Սանուկ	1	Գյուղում պահվել է մի քանի ձեռագիր <b>Ավետարան</b> հետևյալ անուններով՝ <b>Թալալոս, Ծաղիկ (2), Կարմիր, Շեկ</b> : Մոտակայքում պահպանվել էին վանքի ավերակներ
41	Ղարաղայա (Խարախայա)	Սբ Աստվածածին	1	Գյուղի մոտ պահպանվել էին 2 մենաստանի ավերակներ: <b>Ղարաղայան</b> Մանազկերտի գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1000 հայ բնակչով:



42	Ղարալի (Խարալի, Կարա Ալի)			
43	Ղզըլ Յուսուֆ (Կզըլ Յուսուֆ)			<p><b>Ղզըլ Յուսուֆը</b> Մանագլերտի գավառի ծայր հվ-արևելյան վերջին հայաբնակ գյուղն էր՝ <b>Արծկե-Ալջավազի</b> սահմանագլխին: Այս հատվածը ժամանակին անբողջովին հայաբնակ է եղել, ինչի մասին է խոսում 1685 թ. <b>Ղզըլ Յուսուֆից</b> ընդամենը 3 կմ հս-արմ գտնվող <b>Շարո</b> («Շէպօ») գյուղում ընդօրինակված Ավետարանը (այժմ՝ <b>Մաշտոցյան Մատենադարանի</b> թիվ 7799 ձեռագիրը): Ուշագրավ է, որ հիշատակարանում հիշվում է «պարոնտէր» տեր <b>Ներսեսը</b>, որն այս շրջանում հայոց մենաստանի գոյության օգտին կարող է միայն խոսել: Բացի այդ, զարգացած միջնադարում «պարոնտերը» համատեղում էր հոգևոր և աշխարհիկ իշխանությունը, ինչը կարող է <b>Մանագլերտի</b> այս հատվածում նաև հայկական իշխանության առավատչյան լինել: Ուշագրավ է, որ նույն մատյանում 1889 թ. գրված հետագայի հիշատակարանում հանդիպում է հազվագյուտ մի տեղեկություն <b>Ալաշկերտի Մանկասար</b> գյուղի <b>Մելիք-Շահումյանց</b> տոհմի մասին: Այստեղից կարելի է եզրակացնել, որ <b>Մանագլերտի</b> հվ-արեվելյան՝ <b>Սիփանին</b> հարող շրջանում, իրոք, գոյություն է ունեցել հայկական իշխանություն՝ մելիքություն: Հավանաբար այն վերացել է 18-րդ դ. 60-70-ական թթ. (տես վերը), իսկ վերջինիս ներկայացուցիչները տեղափոխվել են <b>Բագրևանդ (Ալաշկերտ)</b>: Հետագայում՝ ամենայն հավանականությամբ 1829-1830 թթ., արդեն ալաշկերտցի մելիքներն անցել են Արևելյան Հայաստան՝ հաստատվելով պատմական <b>Գեղամա երկրի Վերին Կզնուտ (Վերին Ղարանյուղ)</b> գյուղում: Վերջինս ժամանակակից ՀՀ-ի <b>Գեղարքունիքի</b> մարզի <b>Գեղհովիտ</b> գյուղն է (<b>Մարտունու</b> շրջան):</p>
44	Ղլըջի (Խլընջի)			
45	Ղուռուջա (Թուռուջա, Խուռջեն)			Գյուղի մոտ էր գտնվում ավերակ <b>Սբ Աստվածածին</b> վանքը, որը նույնացվում է 14-15-րդ դդ. Մանագլերտի գավառի նշանավոր հոգևոր կենտրոն <b>Ապահունյաց վանքի</b> հետ (հայտնի էր նաև <b>Սբ Նիկողայոս</b> անունով):
46	Մարմուս (Մարմոնց)	Սբ Հովհաննես	1	Մոտակայքում՝ <b>Խաթավին</b> լեռնագագաթի ստորոտին, գտնվում էր <b>Սբ Սահակ</b> կիսավեր վանքը: <b>Մարմուսում</b> (< <b>Մարմանց-Մարմոնց</b> ) 13-14-րդ դդ. հիշվում է <b>Սբ Աստվածածին</b> եկեղեցին:
47	Միլա Ալի (Մայալի)			
48	Միլա Օսման (Մայա Օսման)			
49	Միլաբաղ (Մալաբախ)			Մոտակայքում երևում էին 2 ավերակ վանքի մնացորդներ:
50	Միլա Մուստաֆա (Մայամստաֆա)	եկեղեցի		

51	Յարամիշ	Եկեղեցի		
52	Նորադին (Օծին)	Սբ Հակոբ, Սբ Ստեփաննոս	1	Գյուղում պահվել են ձեռագիր մատյաններ՝ <b>Ծաղիկ և Կարմիր Ավետարաններ</b> : <b>Նորադինի</b> մոտ էր գտնվում <b>Սբ Հովհաննես Օձնեցու</b> վանքը, ուր 726 թ. <b>Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Գ Օձնեցու</b> (717-728) գլխավորությամբ տեղի է ունեցել <b>Մանագլերտի</b> հայ-ասորական միացյալ եկեղեցական ժողովը: Ուխտատեղի էր, ուր հաճախում էին հիմնականում կանայք: 20-րդ դ. սկ. պահպանվել էր գերեզմանատունը՝ գեղաքանդակ խաչքարերով, երևում էին վանական պարիսպների մնացորդները: Գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 1750 հայ բնակչով:
53	Ողջին (Հոխջին, Օխջիան)	Եկեղեցի		Մոտակա անտառոտ վայրում պահպանվել էին եկեղեցու (վանքի ") ավերակներ:
54	Ռոշկան			
55	Ռստամգյաղուկ (Ռստոմաշեն)	Սբ Թովիս Մանուկ, Սբ Կարապետ	1	Գյուղում պահվել են ձեռագիր <b>Ավետարան և Մայր Մաշտոց</b> : Մոտակայքում պահպանվել էին <b>Երեքխորան Սբ Սարգիս</b> վանքի ավերակները: <b>Ռստամգյաղուկը Մանագլերտի գավառի</b> առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 1800 հայ բնակչով:
56	Սարդաուղ (Սրդաուղ, Ցրտուա՞)	Սբ Աստվածածին		
57	Սուլդուզ	Սբ Ամենափրկիչ  (նախկինում՝ վանք)		<b>Արածանու</b> վրա պահպանվել էր 13 թռիչքանի միջնադարյան մի կամուրջ (մասամբ քանդված), որի մոտ գտնվում էին <b>Սբ Նշան</b> տաճարի ավերակները:
58	Սուլթանլու	Եկեղեցի	1	Մոտակայքում գտնվում էին <b>Կարմիր վանքի</b> ավերակները՝ խաչքարերի մնացորդներով:
59	Տոլաղբաշ (Դոլակբաշ)	Սբ Գևորգ		Մոտակայքում պահպանվել էին 2 մենաստանի ավերակներ:
60	Տորախան	Եկեղեցի		
61	Փրենասիան			Ինչպես հուշում է <b>Արածանի-Մուրատի</b> ձախ ափին գտնվող այս գյուղի անունը, մոտակայքում եղել է կամուրջ (թրդ.՝ Pirëmasiya-«ձկների կամուրջ»):
62	Քափրլիս			
63	Քուլթկան			
64	Ֆանրկ (Ֆենեկ)			
65	Ֆիշյան (Ֆիշվան)			

### 3. Վարդոյի (Վարդով) գավառ

Գրավում էր Բիթլիսի նահանգի հյուսիս-արևմտյան հատվածը՝ տարածվելով **Բյուրակնյան** լեռների հարավային ստորոտներին, և ընդգրկում էր **Արածանի-Մուրատի** աջակողմյան **Բյուրակն** կամ **Բազկան** (ստորին հոսանքում՝ **Չարբուհար**, նաև՝ **Չարբուխար**) վտակի (**Հասանավա** օժանդակի հետ) ձորահովիտը: Սահմանակից էր հյուսիսից և հյուսիս-արևելքից, **Բյուրակնյան** լեռներով՝ **Խնուսին** (մասամբ՝ **Քղիին**, 2-ն էլ՝ Էրզրումի

նահանգ), արևելքից՝ **Բուլանուխին**, հարավից, **Արածանու** հունով և **Հավատամքով՝ Մուշ-Տարոնին**, իսկ արևմուտքից՝ **Ճապաղջրին**: **Վարդոյի** կենտրոնը **Բյուրակնի** հարավային փեշերին կառուցված **Գյումգյում** ավանն էր, որը նույնացվում է **Փավստոս Բուզանդի** կողմից հիշատակվող **Արշամունիքի (Վարդոյի** գավառի պատմական անվանումը) **Գումկունք** գյուղի հետ: Առաջին աշխարհամարտի նախօրյակին գավառակենտրոնն ուներ շուրջ 1600 բնակիչ, որից 600-ը (70-72 տուն)՝ հայեր:

Վարդովցի հայերի շրջանում տարածված ավանդապատում գրույցների համաձայն, գավառն այդպես է կոչվել, քանի որ եղել է **Վարդան Մամիկոնյանի** ամառանոցը: Չի բացառվում սակայն, որ տեղանունը որոշակի կապ ունենա **Սուրբ Կարապետից** հյուսիս՝ **Հավատամքի** շրջանում գտնվող միջնադարյան **Վարդուկ (Վարդովկ)** բնակավայրի («գյուղաքաղաք») հետ, որի ավերակները 19-րդ դ. սկզբին դեռ պահպանվել էին (ըստ **Ղ. Ինձիճյանի**՝ ծառայում էր որպես **Սուրբ Կարապետի** հոտերի մակադատեղի): Մինչև 18-րդ դ. վերջը-19-րդ դ. 1-ին տասնամյակները **Վարդոյի** գավառը գրեթե ամբողջությամբ հայաբնակ էր: Սակայն փարթևան, անասնապահության համար խիստ նպաստավոր պայմաններով հարուստ **Բյուրակնյան** լեռները մշտապես իրենց էին ձգում գիշատիչ քուրդ վաչկատուն ցեղերին, որոնց ամենամյա տեղաշարժերն աղետալի հետևանքներ ունեցան տեղի հայ բնակչության համար՝ առիթ տալով վերջինիս մեծագույն մասի գավառից աստիճանական հեռանալուն: Այդ գործընթացը հատկապես արագացրեց տխրահռչակ «ղշլաղը», որն ամայացրեց բազմաթիվ հայկական գյուղեր: 1830-1840-ական թթ. թուրքական իշխանությունները՝ արևմտահայ շատ գավառների նման **Վարդոյի** լքյալ գյուղերը ևս սկսեցին բնակեցնել քրդերով (հիմնականում՝ **ջիբրան** ցեղից): Ի դեպ, դեռ 17-18-րդ դդ.՝ մինչև քրդական ներթափանցումը, **Վարդոյի** հյուսիս-արևմտյան՝ **Բյուրակն** գետի ակունքների շրջանում ընկած գյուղերում, հաստատվել էին նաև դմիլի-գազաներ (**խորմըկի** կամ **խորմանկի** ցեղից): 1860-ական թթ. թուրքական կառավարության որոշմամբ գավառի տարածքում հայտնվեցին նաև կովկասյան լեռնականներ («չերքեզներ»): Օտար էթնիկ տարրերի հաստատումը, անշուշտ, խիստ բացասաբար ազդեց գավառի ազգացեղային նկարագրի վրա: 1870-ական թթ. **Վարդոյի** տարածքի հիմնական մասն արդեն հայաթափ էր եղել, չնայած, ինչպես վկայում է հայտնի արևմտահայ հոգևոր գործիչ **Ա. Տևկանցը (Տեր-Սարգսենց)**, գավառի գրեթե բոլոր բնակավայրերում դեռ կանգուն էին հայկական բազմաթիվ մենաստաններ ու եկեղեցիներ (դրանք եկվորների կողմից հիմնովին ավերվեցին հետագա տասնամյակների ընթացքում): Ուշագրավ է, որ 20-րդ դ. սկզբին մի շարք հայաթափված բնակավայրեր պահել էին իրենց հայեցի անվանումները (անաղարտորեն կամ աղավաղված)՝ **Ամասիա** (քրդ.՝ Avamasiya, իմա՝ «ձկնաջուր»), **Ամուկ** կամ **Համուկ**, **Լալագրակ** կամ **Լագրակ** (քրդ.՝ Lâglâg), **Խնձոր** կամ **Խնձորիկ (Վերին և Ներքին)**, **Կարկառուտ** կամ **Խրխրռուտ**, **Մամախիկ** («մամխի») ծառատեսակի անունից), **Չորսան**, **Ջանսոր** <Ճան(ա)ձոր, **Սուլթանշեն** կամ **Սլթանշեն**, **Վրանջ** կամ **Վռանջ** (°), **Տափակ** կամ **Տափք** (Վերին և Ներքին), **Տողտափ**, **Քերս** կամ **Գիրս**, **Քրմսորան** <Գոմձոր ևն:

Առաջին աշխարհամարտի նախօրեին **Վարդոյի** գավառի 6500-ի հասնող հայ բնակչության ¼-ը կենտրոնացած էր **Բյուրակն** գետի միջին գետահովտի (այդ հատվածում՝ նաև **Դողան**) 4 գյուղերում՝ **Բազկան (Բաքան)**, **Գունդեմիր**, **Դողան** և **Սալքբան** (վերջինս՝ **Բյուրակնի** համանուն օժանդակի ափին): Հայերի մյուս հատվածը ցրված էր **Վարդոյի** այլևայլ գյուղերում՝ մեջընդմեջ քրդերի և դմլիկների հետ: Մեծ Եղեռնի ժամանակ գավառի տարածքը վերածվեց ոչ միայն տեղի, այլև հարևան **Խնուսի** հայության ահավոր սպանդանոցի (կոտորվածների թիվը, մոտավոր հաշվարկներով, անցնում էր 10000 մարդուց): Վերապրած վարդովցի հայերի հետնորդները հաստատվել են ժամանակակից **ՀՀ-ի Թալինի** և **Աշտարակի** շրջանների գյուղերում (**Արագածոտնի մարզ**): Որոշ տվյալներով, ներկայումս փոքրաթիվ քրդացած (ծպոյալ) հայեր են բնակվում գավառակենտրոն **Գյումգյումում**, որը վերանվանվել է **Վարդո** (թրք.՝ Varto):

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ամարան			
2	Աներ (Հաներ)	Եկեղեցի (ավերակ)		Գյուղից շուրջ 10 կմ արմ՝ <b>Արածանի-Մուրատի</b> աջ ափին <b>Ներքին Խնձոր (Խնձորիկ)</b> գյուղի մոտ պահպանվել էր <b>Վանի թագավորության</b> դարաշրջանի հզոր բերդաքաղաք: Վերջինս ժամանակին հսկում էր գետի հոսանքին զուգահեռ դեպի <b>Տարոն</b> տանող ռազմավարական մայրուղին: Իսկ Աներից 2 կմ արլ՝ <b>Դերիկ</b> ( քրդ.՝ «վանքի գյուղ») կամ <b>Աներա Դերիկ</b> գյուղում պահպանվել էին մենաստանի մնացորդներ:
3	Ավրեզ (Ավրիս)			
4	Բազկան (Բաքան)	Սբ Աստվածածին, Սբ Սարգիս	1	Գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1050 հայ բնակչով:
5	Բողան (Բաղան)			
6	Գյումգյում (Գումկունք)	Սբ Գևորգ, Սբ Թորոս	1	<b>Գյումգյումից</b> շուրջ 3 կմ արմ՝ <b>Վ. Ալագյոզ</b> գյուղի մոտ պահպանվել էր <b>Վանի թագավորության</b> դարաշրջանի հզոր ամրոց (թրք.՝ Hirsizkalesi): Նույն <b>Գյումգյումից</b> 5 կմ հվ գտնվող <b>Խոբախուսի</b> ( <b>Վարաբա Յաղուբ</b> ) գյուղի մոտ ևս գոյություն ուներ նմանատիպ ամրոց: Դեպի <b>Բյուրակն</b> ՝ շուրջ 2 կմ հս ընկած <b>Ջաղշեյիս (Ջաղիշեյիս)</b> բնակավայրի շրջակայքը հարուստ էր հայկական եկեղեցիների և վանքերի ավերակներով:
6	Գունդեմիր (Կուտեմիր)	Սբ Աստվածածին,  Սբ Թուխ Մանուկ	1	Գյուղի մոտ պահպանվել էր ավերակ <b>Կարմիր վանքը (Կարմրո վանք)</b> , որը վերածվել էր մատուռ-ուխտավայրի՝ ստանալով <b>Նորեղուկ</b> անունը (հայտնաբերվել էր հողագործական աշխատանքների ընթացքում): Հավանաբար մոտակայքում է գտնվել նաև <b>Սբ Ամենափրկիչ</b> ավերակ մենաստանը: <b>Գունդեմիրը</b> գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. ավելի քան 1800 հայ բնակչով:

7	Դողան (Տոսան)	Սբ Գևորգ, Սբ Թովս Մանուկ	1	Դողանի մոտ պահպանվել էր <b>Սբ Հակոբ</b> կիսավեր մենաստանը, որը ուխտատեղի էր: Տեղի հայերը համոզված էին, որ <b>Դողանից</b> արևելք գտնվող հարևան <b>Ղալաջուղ (Խալաջող)</b> երբեմնի հայկական գյուղում էր ամփոփված <b>Վարդան Մամիկոնյանի</b> շիրինը, որը իլել և յուրացրել էին այստեղ հաստատված քրդերը՝ այն վերածելով իրենց ուխտավայրի (քրդ.՝ ziyarât): <b>Ղալաջուղից</b> շուրջ 3 կմ հվ-արևելք գտնվող նախկինում հայաբնակ մեկ այլ <b>Դարաբի</b> գյուղի մոտ պահպանվել էր նույն <b>Սբ Հակոբ</b> անունով մեկ այլ ավերակ վանք՝ սրբբացված ջերմուկով և նվիրական ծառաստանով: 18-րդ դ. մի հիշատակարանում նշվում է գյուղի տանուտերը. «Գիրքս այս է <b>Սուրբ Կարապետից Աբրահամ վարդապետին</b> , գոր <b>Դարապու</b> ըռես՝ արինսեալ <b>Քօջօն</b> , մէկ եզն ետ ի սորա գինն»: Հատկանշական է, որ <b>Գյումգյումից</b> արլ՝ <b>Խամուրբերդ</b> լեռների հարավային ստորոտին, պահպանվել էր <b>Քոչոյիզում</b> տեղավայրը:
8	Զորավա			
9	Խարախու (Ղարաքոյ)			
10	Կյավռեհրն-գըվ (Մեղ-րաքար)			
11	Հասանավա (Հասան-օվա)	Սբ Գևորգ	1	<b>Հասանավայից</b> 4 կմ հվ-արևմուտք՝ նույնանուն գետակի ակունքների շրջանում, գտնվում էր <b>Քիլիսոկ</b> [թրք.՝ Kiliseli, այն է՝ «եկեղեցու (վանքի) գյուղ»] բնակավայրը, ուր, ինչպես անունն է հուշում, եղել են վանքի կամ եկեղեցու մնացորդներ:
12	Ղարաեյիղ (Խարա-սայիղ)			Ավելի հվ՝ <b>Արածանի-Մուրատի</b> աջակողմյան <b>Չարբուհար (Չարբոհոր)</b> վտակի ստորին հովտում գտնվում էր համանուն գյուղախումբը՝ երբեմնի 5 հայաբնակ գյուղերով. <b>Այնոն (Չերբեգ-Այնոն)</b> , <b>Զրբնկ (Սրինգ )</b> , <b>Թափա</b> (հյր.՝ <b>Բլուր</b> ), <b>Չարբուհար</b> (կենտրոնը) և <b>Տողտափ</b> : Հայերից դատարկված այս բնակավայրերում օսմանյան իշխանությունները 1860-ական թթ. տեղավորեցին <b>լեզգիների</b> և <b>չեչենների</b> : Պահպանված հայկական հուշարձաններից հայտնի են <b>Չարբուհարի Սբ Հարություն</b> ընդարձակ եկեղեցին, <b>Տողտափի</b> բերդը՝ համանուն բարձունքին (թրք.՝ Doğdabkale) ևն: Նշված գյուղախմբից արմ հանդիպում էին նույն ձևատապրին արժանացած որոշ բնակավայրեր, որոնք դեռ պահել էին հայեցի անվանումները ( <b>Քրմսոր</b> կամ <b>Քրմսորան &lt; Գոմձոր, Սուլթանշեն-Սլլթանշեն</b> ևն):
13	Չըռ (Չոըկ)			2-ն էին՝ <b>Վերին</b> և <b>Ներքին</b> , որոնք համարվում էին <b>Հասանավայի</b> գյուղակները: Հայերեն՝ «ջրվեժ» կամ «ջրվեժի գյուղ»:
14	Սալըքան (Սալագան)	Սբ Աստվածածին (Սբ Հակոբ)		Վարչականորեն՝ <b>Սշո գավառի</b> կազմում:
15	Ստուկուռան, Ներքին			Նույնանուն գույգ գյուղերի մոտ եղել է վանք՝ <b>Սբ Մատթեոս</b> անունով, որի մնացորդներն էին միայն պահպանվել:
16	Ստուկուռան, Վերին			
17	Տանձիկ (Տանձիտ, Տանձուտ)			

19-րդ դ. վերջին–20-րդ դ. սկ. հայաթափ եղած գյուղեր՝ **Դերիկ** (**Դարբկ**, պահպանվել էին վանքի ավերակներ), **Թաթան**:

#### 4. Խլաթի (Ախլաթ) գավառ

Գրավում էր Բիթլիսի (Բաղեշ) նահանգի արևելյան, **Վանա** լճի ափամերձ շրջանը՝ տարածվելով **Բզնունյաց** կամ **Խլաթի** լեռներից (հյուսիսում) մինչև **Գրգուռ լեռնագագաթ** (2505 մ)–**Նենրութ լեռնագագաթ** (3050 մ)–**Կծվակի** թերակղզի գիծը (հարավում): Գավառը ներառում էր նաև **Նագիկի** կամ **Գրսա** փոքր լճի գոգավորությունը: Մահմանակից էր հյուսիսից, **Բզնունյաց (Խլաթի)** լեռներով՝ **Բուլանուխին** և **Մանագկերտին**, հյուսիսարևելքից՝ **Արծկե–Ալջավազին (Վանի** նահանգ), արևելքից՝ **Վանա** լճին, հարավից՝ **Բիթլիսի (Բաղեշ) Կենտրոնական** գավառին, արևմուտքից, հիմնականում **Նենրութի** կոնով (ի դեպ, այս լեռնանունը կապում էին **Բելի** կամ **Նեբրովթ–Նենրութի** հետ)՝ **Մշո** գավառին: Գավառն ուներ հետաքրքիր ներքին բաժանում: Հյուսիսարևելյան հատվածը (ներառյալ՝ **Նագիկ** լճի ավազանը) մինչև Խլաթի գրեթե կենտրոնով հոտող համանուն գետ, կոչվում էր **Վանի Խլաթ** (պաշտոնական՝ Van-Ahlat), իսկ հարավարևմտյան՝ **Նենրութի** և **Գրգուռի** հարակից հատվածը մինչև նշանավոր **Ռահվայի** (պատմական **Ձորա պահակ**) լեռնանցք՝ **Մուշի Խլաթ** (Mus-Ahlat): Խլաթի գավառակենտրոնը Վանա լճի արևմտյան ափին ցրված 5–7 «թաղերից» կազմված համանուն գյուղաքաղաքն էր: Մահմեդական երկարատև տիրապետությունը, որի լավ ապացույցն են սելջուկյան և թուրքմենական ժամանակաշրջանների (հայ ձարտարապետների ակնհայտ մասնակցությամբ) հսկա դամբարանները (թրք.՝ türbe) և աշտարակները (թրք.՝ kubbe), բացասաբար է անդրադարձել այս պատմական հարուստ անցյալ ունեցող բնակավայրի ազգացեղային նկարագրի վրա: Հատկապես օսմանյան տիրապետության հաստատումով (16-րդ դ. 40-ական թթ.) **Խլաթը**՝ որպես վարչական կարևոր կենտրոն, հետևողական կերպով բնակեցվել է թուրք քաղաքացիական և ռազմական պաշտոնյաների ընտանիքներով, ինչպես նաև քրդերով (տարբեր ցեղերից), որոնք, ի դեպ, շատ արագ թրքանալով՝ ձուլվեցին: 19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին հայաբնակ էր միայն Հին քաղաքի հատվածը՝ **Խարաբաշեհիրը (Վերանշեհիր**, թրք.՝ «ավեր քաղաք»), ուր պահպանվել էին միջնադարյան բերդի ավերակները, հինավուրց ժայռափոր **Սբ Նիկողոս** վանքը (կիսավեր) և **Սբ Աստվածածին** գործող եկեղեցին: Խլաթի մյուս «թաղերը», այդ թվում՝ լճափին ընկած վարչական կենտրոն **Բերդի թաղը** կամ **Հարկընծանը** (թրք.՝ Erkizan), ուր գտնվում էր արդեն օսմանյան տիրապետության սկզբում կառուցված բերդը, համատարած թրքաբնակ էին դարձել: 1914 թ. գյուղաքաղաքն ուներ ավելի քան 700 տուն բնակիչ, որից 40-ը՝ հայեր (250–300 մարդ): **Խլաթի** մասեր էին դիտվում նաև երբեմնի հայաբնակ **Դնուս** (թրք.՝ Tonus), **Ղուլախարզ (Գուլաքսրզ)** և **Սոռ** «արվարձան»-գյուղերը, որոնք դարձյալ լցվել էին թուրքերով և քրդերով:

Բոլորովին այլ էր վիճակը բուն գավառում: Մինչև 19-րդ դ. կեսերը **Խլաթի** բնակավայրերը գրեթե ամբողջությամբ հայաբնակ էին: 1860–

1870–ական թթ. թուրքական իշխանությունները գավառի գյուղերում սկսեցին նպատակաուղղված կերպով բնակեցնել քրդերի և հատկապես կովկասյան լեռնականների (գերագանցապես՝ մահմեդական օսերի): Ի հետևանս այս քաղաքականության, հիմնականում հյուսիս–արևելյան որոշ բնակավայրեր կամ հայաթափվեցին (**Դավալիկ, Յողուրթեմազ-Եղրդամեծ**), կամ էլ տեղի հայ բնակչության մեծ մասը դուրս մղվեց եկվորների կողմից (**Աղջավերան, Խանիկ, Խիարթանք, Նագիկ**): Սրանից բացի՝ հայերի տեսակարար կշիռն արհեստականորեն նվազեցնելու մտադրությամբ, թուրքական կառավարությունը որոշակի ձևափոխությունների ենթարկեց վարչամիավորի սահմանները: 20–րդ դ. սկզբին **Խլաթի** գավառի հարավային հատվածը՝ զուտ հայաբնակ **Դատվանի** կամ **Ռահվայի** գյուղախումբը (թրք.՝ nahıye), որը տարածվում էր **Նենրուբի** և **Գրգուռի** արևելյան ստորոտներից մինչև պատմական նշանավոր **Ջորա պահակ** լեռնանցք (**Ռահվա**, թրք.՝ Rahova) ու **Ազնվացձոր** գետի (թրք.՝ Güzelderesuyu) վերին ավազանը, միացվեց **Բիթլիսի (Բաղեշ) Կենտրոնական** գավառին: Փոխարենը **Խլաթին** անցան **Մշո** գավառի մի շարք քրդաբնակ գյուղեր: Այնուամենայնիվ, ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտ հայերը կազմում էին **Խլաթի** գավառի բնակչության բացարձակ մեծամասնությունը՝ ավելի քան 14500 մարդ կամ 65%–ը: Ընդ որում, առանց **Խլաթ** գյուղաքաղաքի, հայ բնակչությունը կազմում էր 80%:

1895–1896 թթ. շնորհիվ առասպելական հերոս, գավառի **Սոխորթ** գյուղացի **Աղբյուր Սերոբի (Սերոբ Վարդանյան, 1864–1899)** զինված խմբի՝ **Խլաթի** հայությունը գրեթե կորուստ չունեցավ: Ցավոք, 1915 թ. հնարավոր չեղավ կազմակերպել հաջող ինքնապաշտպանություն, և **Խլաթի** հայությունը ենթարկվեց զանգվածային բնաջնջման (անհաջող դիմադրության փորձեր են եղել միայն **Թեղուտում** և **Փրխուտում**): Որոշ տվյալներով՝ գավառի հայերից փրկվել է շուրջ 1000 մարդ, այն է՝ նախապատերազմյան բնակչության միայն 7%–ը:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ագրակ	Երեթխորան Սբ Աստվածածին		
2	Աղաղ (Առաղ)	Եկեղեցի		Նախապես <b>Աղաղը</b> գտնվել է շուրջ 3 կմ արլ՝ լճի ափին: Սակայն 19–րդ դ. 20–ական թթ. ջրի մակարդակի բարձրացման հետևանքով բնակիչները ստիպված էին հեռանալ ջրակույ եղած գյուղից (ի դեպ, ջրի տակ էր մնացել նաև եկեղեցին) և հիմնել նոր <b>Աղաղն</b> ավելի ապահով վայրում: Վերջինում, սակայն, եկեղեցի չկառուցվեց, քանի որ 19–րդ դ. կեսերին <b>Աղաղի</b> հայերը, Արմ Հայաստան թափանցած ամերիկյան քարոզիչների գործունեության արդյունքում հարեցին բողոքականությանը, որը մերժում է ավանդական եկեղեցու կառույցը:
3	Աղջավերան	Եկեղեցի (ավերակ)		Գյուղը գտնվում էր <b>Վանա լիճ</b> թափվող <b>Խլաթ</b> գետի վերին հոսանքի շրջանում: <b>Աղջավերանի</b> հարևանությամբ մինչև 19–րդ դ. կեսերը կային հայաբնակ մի քանի գյուղեր, որոնց եկեղեցիները 19–րդ դ. 70–ական թթ. դեռ կանգուն էին (ցավոք, անունները հայտնի չեն): Այդ գյուղերն էին՝ <b>Դավալիկ, Խածուկ, Յողուրթեմազ</b> (թրք.՝ Yöğürtyemez < <b>Եղրդամեծ</b> ): Ի դեպ, տվյալներ կան, որ 20–րդ դ. սկ. վերջինում դեռ ապրել են փոքրաթիվ հայեր (5 տուն):

4	Թեղուտ	Սբ Ստեփաննոս (Սբ Աստվածածին), Սբ Գևորգ	1	<b>Թեղուտի</b> շրջակա բրյուրներին կանգնեցված էին մի քանի՝ բնության արհավիրքները կանխարգելող խաչքարեր՝ « <b>Ցասան խաչեր</b> »: Նշանավոր էր նաև գյուղի հին գերեզմանատունը՝ ուշագրավ խաչարձաններով: <b>Թեղուտից</b> շուրջ 4 կմ հվ-արևմուտք՝ <b>Նեմրուքի</b> լանջին, կառուցված էր <b>Բզունյաց գավառի</b> ամենանշանավոր մենաստանը՝ <b>Սբ Հովհաննես</b> վանքը ( <b>Թեղուտա անապատ, Սբ Աստվածածին</b> ): Գործող վանք էր (19-րդ դ. վ. միաբանների թիվը գերազանցում էր 2 տասնյակը) և հայտնի ուխտատեղի: Կից կար սրբացված <b>Լուսաղբյուր</b> : <b>Թեղուտը</b> գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 2000 հայ բնակչով:
5	Խանիկ			
6	Խիարթանք (Խիարդանկ)			<b>Խիարթանքից</b> շուրջ 5 կմ հս-արևմուտք՝ <b>Նագիկի</b> լճափին բարձրացող <b>Շեղջիկ</b> (2312 մ) լեռան ստորոտին գտնվում էր <b>Գիրս</b> կամ <b>Կիրս (Քերս)</b> երբեմնի հայաբնակ գյուղը: Պահպանվել էր գյուղի կիսախարխուլ <b>Սբ Ամենափրկիչ</b> գետնափոր եկեղեցին: <b>Գիրսը</b> , սակայն, ավելի հայտնի էր իր <b>Սբ Հովհաննես</b> վանքով, որն ընկած էր գյուղից շուրջ 8 կմ հվ-արևմուտք՝ <b>Նագիկ</b> լճի հյուսիսային ափին: 19-րդ դ. վ. թեև մենաստանն արդեն ավերակ էր և լքված, սակայն շրջակա պուրակը սրբացված էր թե՛ հայերի և թե՛ քրդերի կողմից, որոնք երկյուղում էին այստեղից անգամ փոքր ճյուղեր հատել:
7	Խուլիկ	Սբ Թադևոս, Սբ Սարգիս	1	
8	Ծաղկե	Սբ Դանիել		Գյուղից շուրջ 4 կմ հվ-արևելք գտնվում էր <b>Խնուն</b> գյուղը, որը կարծում ենք, հիմնադրել և անվանակոչել են 11-րդ դ. կեսերին <b>Գրիգոր Մագիստրոս Պահլավունու</b> կողմից հայածված <b>Խնուսի</b> (պատմ. անվանումը՝ <b>Խնունիս</b> ) թոնդրակեցի աղանդավորները:
9	Ծղակ	Սբ Ստեփաննոս (Սբ Գևորգ), Սբ Հովհաննես	1	Գյուղի մոտ պահպանվել էր <b>Սբ Աստվածածին</b> վանքը ( <b>Ծղաքու վանք</b> ), որը 19-րդ դ. արդեն չէր գործում: <b>Ծղակից</b> 4 կմ հս-արեվելք՝ համանուն թերակղզում գտնվող <b>Աղաբաղ(ի)</b> երբեմնի հայաբնակ գյուղում պահպանվել էր ավերակ եկեղեցին: <b>Ծղակը</b> գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1400 հայ բնակչով:
10	Կարմունջ	Սբ Աստվածածին (Սբ Ստեփաննոս), Սբ Դանիել	1	Անունը՝ մոտակա քարե կամուրջից ( <b>Խլաթ</b> գետի վրա): Գյուղից հարավ՝ <b>Վանա</b> լճի ափին, պահպանվել էին պատմական <b>Աղեթ (Աղետ)</b> գյուղի ավերակները: 13-14-րդ դդ. գյուղում ընդօրինակված բազմաթիվ ձեռագիր մատյանների հիշատականներում հանդիպում են <b>Սբ Կարապետ</b> և <b>Սբ Հակոբ</b> եկեղեցիները: <b>Աղեթ</b> գյուղատեղիից շուրջ 3 կմ հվ-արևելք գտնվում էին մեկ այլ պատմական բնակավայրի՝ <b>Վեշտոնքի</b> ավերակները: Դարձյալ ձեռագիր հիշատակարաններից հայտնի է գյուղի եկեղեցու անունը՝ <b>Սբ Հակոբ</b> («ընդ հովանեաւ <b>Սբ Յակոբիս</b> և <b>Սբ Սարգսիս</b> և <b>Սբ Գրիգորիս</b> ): <b>Վեշտոնքի</b> շրջանում էր գտնվում նաև <b>Մաղալխաչ</b> ավերակը (հավանաբար՝ ուխտատեղի էր):
11	Կծվակ	Սբ Գևորգ Ջորավար	1	Գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 1300 հայ բնակչով: Վարչականորեն 1914 թ. <b>Բիթլիսի Կենտրոնական</b> գավառի կազմում էր:



12	Կոճեվանք (Կոճերվանք)			Հավանաբար մոտակայքում գոյություն է ունեցել վանք, որի մասին, զավոր, տեղեկություններ չեն պահպանվել: <b>Կոճեվանքից</b> շուրջ 4 կմ արլ գտնվում էր <b>Արենց</b> կամ <b>Հարենց</b> գյուղատեղին, ուր պահպանվել էր ավերակ <b>Սբ Աստվածածին</b> մենաստանը ( <b>Հարենց Սբ Աստվածածին</b> ):
13	Կուշտիան (Կոշտյան)	Սբ Ստեփանոս (Սբ Աստվածածին)	1	
14	Հերսոնք (Երեսունք)	Սբ Թեոդորոս (Սբ Թորոս)	1	
15	Չորկունք (Չորկունք)	Սբ Ստեփանոս (Սբ Ներսես)	1	Վարչականորեն 1914 թ. <b>Բիթլիսի Կենտրոնական</b> գավառի կազմում էր:
16	Մատնավանք	Սբ Գևորգ		16-րդ դ. մի հիշատակարանում հիշվում է <b>Սբ Պողոս</b> եկեղեցին: Գյուղում՝ նախկին մեխյանի մոտ (այդ վայրը կոչվում էր « <b>Դիվակուլ</b> »), կառուցված էր <b>Սբ Աստվածածին</b> ժայռափոր վանքը, որի հիմնադրումը կապում են <b>Սբ Թադևոս Առաքյալի</b> անվան հետ: Վանքը կոչվել է նաև <b>Մատնեվանք</b> , <b>Մատներո վանք</b> : Ի դեպ, վանքի մոտ բխում էր սրբազված « <b>Սբ Թադեի աղբյուրը</b> »:
17	Մեծք(ի)	Սբ Ստեփանոս (Սբ Գևորգ)	1	Հիշվում է նաև <b>Սբ Նիկողոս</b> եկեղեցին: Մոտակայքում պահպանվել էին 2 մենաստանի ավերակներ: <b>Մեծքը</b> գավառի մեծ գյուղերից էր 1914 թ. 1400 հայ բնակչով:
18	Նագիկ (Նագուկ)			
19	Շամիրամ	Սբ Սարգիս	1	Մոտակայքում պահպանվել էին <b>Սբ Գևորգ</b> վանքի ավերակները: <b>Նենրույթ</b> ստորոտին գտնվում էր Շամիրամի կիսավեր բերդը, որի մոտ բխում էր «Շամիրամի աղբյուրը»: Վարչականորեն 1914 թ. <b>Բիթլիսի Կենտրոնական</b> գավառի կազմում էր:
20	Պատնոցիկ (Բաղնոց)			Վարչականորեն 1914 թ. մտնում էր <b>Վանի նահանգի Արծևե-Ալջավազ</b> գավառի կազմում:
21	Ջամայդին	Սբ Սարգիս	1	
22	Ջգիրոք (Ջեգիրե, Կղզի)	Սբ Ստեփանոս (Սբ Ամենափրկիչ), Սբ Մինաս		Գյուղի մոտ պահպանվել էին բերդի ավերակներ:
23	Ջրհոր	Սբ Աստվածածին (Սբ Գևորգ)	1	<b>Ջրհորը</b> կառուցված էր <b>Գրգուռի</b> արևելյան ստորոտին: Գյուղից մինչև <b>Նենրույթ</b> ձգվում են քարակույտեր ( <b>Գրգուռի</b> երբեմնի հրաբխային ակտիվության հետևանքը), որոնք տեղացիները կոչում էին « <b>Բեյի ուղտեր և ուղտապաններ</b> » (բրբք՝ « <b>Ըղտու քարեր</b> »): Գյուղացիների շրջանում պահպանված ավանդազրույցի համաձայն՝ <b>Հայկ Նահապետի</b> կողմից հայտնի բռնակալի սպանության լուրն այնպիսի սարսափ է տարածել նրա բանակին սնունդ հասցնող քարավանի վրա, որ թե մարդիկ, և թե ուղտերը տեղում քարացել են: <b>Ջրհորից</b> շուրջ 2 կմ հվ-արևմուտք՝ անմիջապես <b>Գրգուռի</b> ստորոտին, փռված է <b>Մուսկավանքի</b> գոգավորությունը (թրք. Miskavan Çukuru), որը <b>Մուսկի</b> կամ <b>Մուսկի</b> դաշտ անունով հիշատակվում է պատմիչ <b>Կեղծ (Կարծեցյալ) Շապուհ Բագրատունու</b> երկում՝ 896 թ. ողբերգական դեպքերի կապակցությամբ, երբ <b>Սմբատ Ա Բագրատունու</b> բանակը իշխան <b>Գագիկ-Ալուրվան Արծրունու</b> դավաճանության հետևանքով, ծանր պարտություն կրեց <b>Աղձնիքի (Արգան)</b> արաբ ամիրայի հրոսակներից: 19-րդ դ. վերջին այստեղ պահպանվել էին <b>Մուսկավանք (Միսկավանք)</b> գյուղատեղիի ավերակը (մինչև 1880-ական թթ. սկիզբը շեն էր և <b>հայաբնակ</b> ), համաձայն ավերակ մենաստանը, որն ուխտատեղի էր: <b>Ջրհորը</b> 1914 թ. վարչականորեն մտնում էր <b>Բիթլիսի Կենտրոնական</b> գավառի կազմի մեջ:

24	Մոխորթ (Մոխորթ, Մղորդ)	Սբ Աստվածածին		Գյուղի մոտ գտնվում էր <b>Սբ Թադևոս</b> վանքը:
25	Սփռածոր (Սպռածոր)	Սբ Ստեփաննոս		
26	Տափավանք	Սբ Աստվածածին (Մայր Աստվածածին)	1	Եկեղեցին նախկինում վանք է եղել: Անհատների մոտ պահվել են մեկ տասնյակից ավելի ձեռագիր մատյաններ (գերագանցապես՝ <b>Ավետարաններ</b> ): Մոտակայքում երևում էին վանքի ավերակներ: Գյուղից շուրջ 2 կմ հվ-արևմուտք գտնվում էր <b>Զարդախան</b> գյուղատեղին, որը հայաբնակ էր մինչև 1870 –ական թթ.: <b>Տափավանքը</b> գավառի մեծ գյուղերից էր՝ 1914 թ. 1200 հայ բնակչով:
27	Փրխուս	Սբ Ստեփաննոս	2	Գյուղում անհատ անձանց մոտ պահվել են ձեռագրեր, որոնցից հայտնի էր « <b>Կարմիրկող Ավետարանը</b> »: <b>Փրխուսը</b> գավառի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 2200 հայ բնակչով: <b>Փրխուսից</b> շուրջ 6 կմ հս՝ <b>Նազիկի լճի</b> հվ-արևելյան ափի մոտ գտնվող պատմական <b>Խոզուձոր</b> վայրում, պահպանվել էր <b>Սողած</b> գյուղատեղին (բնակավայրն ամայացել էր 1880-ական թթ. սկզբին, իսկ հայ բնակչությունը՝ տեղափոխվել <b>Վան</b> ): 16-րդ դ. <b>Սողածում</b> ընդօրինակված բազմաթիվ ձեռագիր մատյաններից հայտնի է <b>Սբ Խաչ</b> վանքը ( «ընդ հովանեաւ <b>Սբ Թադէոսի</b> օծեալ <b>Խաչին</b> , որ մականունն <b>Խոզուձոր</b> ասի» կամ «ընդ հովանեաւ <b>Սբ Խոզուձորու Սբ Խաչին</b> »): Ի դեպ, 1578 թ. գրված ձեռագրերից մեկում հիշատակվում է նաև գյուղի <b>Սբ Հակոբ</b> եկեղեցին:

**Ծնթ.** Խլաթի գավառի բնակավայրերը տրված են ըստ 1880-ական թթ. սահմանների (առանց Դատվան, Թուխ և Ուրտափ գյուղերի):

### Դատվան-Ռահվայի գավառակ

Գավառակը (պաշտոնապես՝ **Ռահվայի** գյուղախումբ) ընդգրկում էր **Բիրբլիսի (Բաղեշ) Կենտրոնական** գավառի հյուսիսային հատվածը: Այն տարածվում էր Վանա հարավ-արևմտյան լճափից (արևելքում) մինչև **Նեմրութ** և **Գրգուռ** լեռնագագաթները (արևմուտքում): **Դատվանի** գավառակի կազմում էին նաև նշանավոր **Ձորա պահակի (Ռահվայի)** լեռնանցքի հարավային կողմում տարածվող տափարակը՝ **Ռահվայի** դաշտը և **Բաղիշուր** գետի (թրք.՝ Bitlissuyu) ակունքների շրջանը: Նման սահմաններ ձևավորվել էին 1880-ական թթ. կեսերին: Մինչ այդ, վերոհիշյալ լեռնանցքից հյուսիս և արևելք՝ անմիջապես **Վանա** լճի ափին ընկած բնակավայրերը (ներառյալ գավառակի կենտրոն **Դատվանը**) վարչականորեն **Խլաթի** գավառի կազմում էին: 20-րդ դ. սկզբին նույն **Խլաթից Կենտրոնական** գավառին փոխանցվեցին նաև **Կծվակ** և **Ձորկոնք** գուտ հայաբնակ գյուղերը, ինչով **Դատվանի** գավառակի հյուսիսային սահմանը դարձավ **Նեմրութի** արևելյան ստորոտից մինչև **Կծվակի** թերակղզի ձգվող գիծը: Վարչամիավորը սահմանակցում էր հյուսիսից՝ **Խլաթին**, արևելքից՝ **Վանի** նահանգին, հարավից՝ **Ազնվաց ձոր (Գյոզալդարա)** և **Փարխանդ** գավառակ-գյուղախմբերին (**Կենտրոնական** գավառ), իսկ արևմուտքից՝ **Վերին**

**Չուխուրին** (դարձյալ **Կենտրոնականի** գավառակներից):

Ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտը **Դատվանի** գավառակը գրեթե զուտ հայաբնակ էր (մի քանի գյուղերում հանդիպող քրդերը սակավաթիվ էին): Մեծ Եղեռնի նախօրեին Դատվանն ուներ 7000 բնակիչ, որից 6300-ը՝ հայեր (90%-ը): 1915 թ. տեղի հայությունը՝ **Բիթլիս (Բաղեշ)** քաղաքի և շրջակա մյուս գավառակ-գյուղախմբերի հայրենակիցների հետ ենթարկվեց զանգվածային բնաջնջման: Փրկվածները խիստ սակավաթիվ էին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Բ. (ԺԳ) փաթիլ, թիվ 3 (55), հայխա-սեպտեմբեր, 2016

ՎՎՎ համահայկական հանդես

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ալամեք (Ալամենց)	Սբ Կարապետ, Սբ Սարգիս		Գյուղում և շրջակայքում հայտնի էին <b>Սբ Աստվածածին, Սբ Կիրակոս</b> և <b>Սբ Հովհաննես</b> ավերակ եկեղեցիները: Ընդ որում, 1-ինը և 3-րդը հիշվում են 17-րդ դ. հիշատակարաններում: <b>Ալամեքը</b> հայտնի էր հատկապես իր միջնադարյան իջևանատնով (« <b>Ալամենց խան</b> »):
2	Աղքըձոր (Անգեստր)	Սբ Սարգիս		
3	Բարշեն (Փափշեն)	Սբ Հարություն (Ամենափրկիչ), Չարխափան Սբ Աստվածածին, Սբ Ստեփաննոս	1	Կար ևս մեկ ավերակ եկեղեցի՝ <b>Սբ Սարգիսը</b> : Հայտնի էր նաև <b>Լուսապտուղ Սբ Սահակ</b> մատուռը, որին կից սրբազան ուռուտն ուխտատեղի էր (հատկապես մաքազավով տառապողների համար): Գյուղի մոտ պահպանվել էր միջնադարյան իջևանատուն (« <b>Բարշենու խան</b> »):
4	Դատվան	Սբ Թեոդորոս, Սբ Սարգիս	1	<b>Սբ Սարգսի</b> շրջակայքը հարուստ էր հնագույն՝ 13-րդ դ. և ավելի վաղ թվագրվող ուշագրավ խաչքարերով: Նշանավոր էր նաև գյուղի գրեթե կենտրոնում տեղադրված « <b>Ցաման խաչք</b> »: <b>Դատվանը</b> Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Չի բացառվում, որ տեղանունը կապված է սեպագիր արձանագրություններում հիշատակվող <b>Դադա (Դադե)</b> անձնանվան հետ (ի դեպ, <b>Գեղամ</b> նահապետի թոռան՝ <b>Գառնիկի</b> որդիներից մեկի անունը <b>Դատ</b> էր): Կարելի է նաև հարակից գավառներում նույնանուն մի քանի գավառակներում բնակավայրերի առկայությունից եզրակացնել, որ <b>Դատվանը</b> հանդիսացել է միաժամանակ և վարչական և դատական իշխանության նստավայր: 10-11-րդ դդ., այն է <b>Վասպուրականի Արծրունյաց թագավորության</b> դարաշրջանում, <b>Դատվանը</b> քաղաքային բարգավաճ բնակավայր էր՝ իր հայտնի <b>Սենեքերիմի</b> բերդով, որի ավերակները 20-րդ դ. սկ. պահպանվել էին գյուղի արլ մասում (լճափի մոտ) տեղացիների կողմից « <b>բերդ</b> » կոչվող բլրի վրա: Տեղի հայերի մոտ շրջանավոր ափանդազրույցի համաձայն՝ <b>Դատվանը Վասպուրականի Սենեքերիմ Արծրունի</b> արքայի (968-1021) ամառանոցային նստավայրն էր և ուներ 1500-2000 տուն բնակիչ: Ի դեպ, 20-րդ դ. սկ. գյուղում և շրջակայքում պահպանվել էին 5 ավերակ և որպես ուխտատեղի ծառայող եկեղեցիներ՝ <b>Սբ Գրիգոր, Սբ Կիրակոս, Սբ Սիմոն, Սբ Ստեփանոս, Սբ Քառասուն Մանուկ (Սբ Քառասունք)</b> , ինչը ևս փաստում է <b>Դատվանի</b> երբեմնի նշանակալի բնակավայր լինելը: Դատվանն իր նշանակությունը պահել էր նաև օսմանյան տիրապետության սկզբնական

				շրջանում և 16-18-րդ դդ. <b>Վանի</b> նահանգի (թրք.՝ eyâlet) հատուկ կարգավիճակ ունեցող փոքր վարչամիավորի՝ <b>սուբաշիության կենտրոն էր</b> : Գյուղը հնուց հայտնի էր իր նավամատույցով, իսկ բնակչության մի զգալի մասի հիմնական զբաղմունքը նավավարությունն ու ձկնորսությունն էին: <b>Դատվանը</b> գավառակի բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. շուրջ 1500 հայ բնակչով:
5	Թուխ (Թուղխ)	Սբ Աստվածածին	1	Գյուղի մոտ պահպանվել էին <b>Եզդիբուզի (Յիզդիբուզի)</b> վանքի ավերակները: Գյուղի բնակիչները հիմնականում նավավարներ էին:
6	Խախրև (Խախռեֆ)	Սբ Հակոբ Մծբնացի	1	Պահպանվել էին նաև կիսավեր <b>Սբ Սահակ և Սբ Ստեփանոս</b> եկեղեցիները:
7	Կամախ	Սբ Ստեփանոս, Սբ Քառասուն Մանուկ (Սբ Քառասուն Նահատակաց)	1	Գյուղի մոտ գտնվում էր « <b>Խաթուն ակ</b> » աղբյուրը, որի շրջակայքում գոյություն ունեւ սրբացված կաղամախուտ: 1880 թ. վերջինս թուրքական իշխանությունների կողմից լրիվ հատվեց. իսկ փայտն օգտագործվեց <b>Բիթլիսում (Բաղեշ)</b> կառուցվող գորանոցի շինարարության համար:
8	Ձվար (Ծվար)	Սբ Աստվածածին, Սբ Սարգիս (Սբ Գևորգ)	1	Գյուղի մոտ հայտնի էր « <b>Ավագ Խաչ</b> » ուխտավայրը, որը շրջապատված էր սրբացված ծառերի պուրակով, որը 1880 թ. նույնպես արժանացավ հարևան <b>Կամախի</b> կաղամախուտի ծակատագրին: <b>Ձվարից</b> շուրջ 2 կմ հս-արևմուտք՝ Բիթլիս քաղաք տանող ճանապարհին պահպանվել էր « <b>Բաշխան</b> » միջնադարյան իջևանատունը:
9	Մեզրե (Հայ Մզրեն)	Սբ Գևորգ		
10	Ուրտափ (Հուրթափ)	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ	1	<b>Դատվանի</b> գավառակի մեծ բնակավայրերից էր՝ 1914 թ. 1000-1200 հայ բնակչով:
11	Պոռ (Բոր)	Սբ Անանիա Առաքյալ, Սբ Հարություն	1	Գյուղում կային երկու ավերակ եկեղեցիներ՝ <b>Սբ Հարություն</b> և <b>Սբ Սարգիս</b> : <b>Պոռը</b> հայտնի էր իր <b>Սբ Հովհաննես Մկրտիչ</b> վանքով ( <b>Պոռավանք</b> ), որը հայտնի ուխտատեղի էր: Վանքում պահպանվել էին հնագույն խաչքարեր: <b>Վանքը կոչվել է նաև Սբ Գրիգոր Նարեկացի</b> (« <b>Պոռայ վանքն Նարեկ</b> »), քանի որ, ըստ ավանդության, մի որոշ ժամանակ այստեղ է գործել <b>Սբ Գրիգոր Նարեկացին</b> : <b>Պոռում</b> է ծնվել միջնադարի նշանավոր տաղերգու, ծաղկող և եկեղեցական գործիչ <b>Մկրտիչ Նաղաշը</b> :

**Ծնթ.** Դատվանի գավառակի մեջ մտնող Շամիրամ և Ջրհոր գյուղերը տե՛ս Խլաթի գավառում:

## 5. Գենջի սանջակ Գենջի և Ճապաղջրի գավառներ

Իրար սահմանակից **Գենջի** և **Ճապաղջրի** գավառները գրավում էին **Գենջի** սանջակի հյուսիս-արևմտյան՝ **Արածանու (Մուրատ)** գետի միջին հոսանքն ընդգրկող հատվածը: Վարչական առումով **Գենջի** գավառի կազմի մեջ էր ընդգրկված նաև **Հայկական Տավրոսից** (այդ հատվածում՝ **Արջիքարի** լեռներ) հարավ ընկած **Փեչարի (Բեչար)** գավառակը (պաշտոնապես՝ գյուղախումբ, թրք.՝ nahiye), որը գրավում էր **Արևմտյան Տիգ-**

**րիսի** աջակողմյան գլխավոր վտակ **Բաթմանաջրի** կամ **Քաղիրթի** օժանդակը հանդիսացող **Սառոմի** գետահովիտը: **Գենջի** մեջ էր մտնում համանուն սանջակի արևելյան մասը՝ **Մուշ-Տարոնի** անմիջական սահմանակցությամբ: Գավառի սահմաններն էին. արևելքում՝ **Սեռոքով** կամ **Պալունյաց լեռները**, հարավում՝ **Սասունի Խուլփի** գավառը և **Դիարբեքիի** նահանգի սահմանագիծը, արևմուտքում՝ **Արածանու** աջակողմյան **Գինեկ** (թրք.՝ Göynüksuyu կամ Göneksuya) վտակի ավազանի ջրբաժանը, որով **Գենջը** սահմանակցում էր **Ճապաղջրին**, իսկ հյուսիսում, **Հավատամքի** լեռների արևմտյան ճյուղավորումները, որոնցով բաժանվում էր **Վարդոյից**: **Գենջի գավառը** կազմված էր մի քանի գավառակ-գյուղախմբերից: Հյուսիս-արևելքում՝ **Մշո գավառի** արևմտյան ողջ սահմանի երկայնքով մինչև **Արածանի-Մուրատի** հունը, տարածվում էր **Մանաշկուտը (Մանաշքութ)**, նաև՝ **Մալաշքութ** կամ **Մառաշքութ**, պատմ.՝ **Պալունիք**): Մյուս գավառակ-գյուղախմբերը՝ **Ղամբանը**, **Գենջը (Կինձ)**, **Թավուսը**, **Զքթեն** (թրք.՝ Zigdi) և **Եղգիկը** (թրք.՝ Yahkik) ընկած էին գետից հարավ՝ տարածվելով մինչև **Հայկական Տավրոս**: Մինչև 19-րդ դ. 70-ական թթ. **Գենջի** կենտրոնն **Արածանու** ձախ ափին գտնվող **Գենջ**, ըստ հայկական աղբյուրների՝ **Բերդ** կամ **Կինձ** բերդավանն էր (թրք.՝ Kaleköy): Հետագայում գավառակենտրոն դարձավ փոքր-ինչ դեպի արևմուտք գտնվող հայաբնակ **Արդուշեն** կամ **Արշեն** ավանը, որը **Տարոնի Սուրբ Հովհաննեսի (Եղրդուտի)** վանքի 1445 թ. նշանավոր կոնդակում հիշվում է «Առջիշէն» ձևով: 1914 թ. այն ուներ շուրջ 300 տուն բնակիչ, որից 35-40-ը՝ հայեր:

**Ճապաղջուրը**, ինչպես վերը նշեցինք, գտնվում էր **Գենջի** արևմտյան հարևանությամբ և ընդգրկում էր **Արածանու** աջակողմյան **Գինեկ** վտակի ողջ գետահովիտը: Ընդ որում, վերջինիս հյուսիսն ընդգրկում էր համանուն գավառակը (գյուղախումբ), իսկ հարավը [սերառայալ **Գինեկի Կիթջուր** (թրք.՝ Gaydsuyu կամ İd suyu) օժանդակի ձորահովիտը]՝ **Բուն Ճապաղջուրը**: **Ճապաղջրի գավառը** սահմանակից էր. հյուսիսից, **Բյուրակնյան** կամ **Բինգյուլի** (թրք.՝ Bingöl) լեռների արևմտյան ճյուղավորումներով, իսկ արևմուտքից՝ **Սանջակի** ու **Զրվեժի** (Cavreş Dağı) փոքրիկ լեռնապարերով՝ **Քղիի գավառին** (Էրզրումի նահանգ), հարավից, **Արածանու** հունով՝ **Գենջի Զքթե** և **Եղգիկ** գավառակներին, հարավ-արևմուտքից՝ **Բալուի** գավառին (**Դիարբեքիի** նահանգ):

2 գավառներն էլ մինչև 19-րդ դ. կեսը եղել են դանիկական կիսանկախ իշխանություններ (թրք.՝ hünkümet): Դրանով հանդերձ, տեղի բնակչության գերակշիռ մեծամասնությունը, ընդհուպ մինչև 19-րդ դ. 40-ական թթ. կազմել են հայերը: Սակայն պարբերաբար կրկնվող միջցեղային կռիվները, իսկ 1847-1849 թթ.՝ Օսմանյան կայսրության կողմից կիսանկախ քրդական իշխանությունների դեմ կազմակերպված ռազմական արշավանքներն անդառնալի հարված հասցրին հայ բնակչությանը, ինչի հետևանքով բազմաթիվ բնակավայրեր հայաթափվեցին կամ ամայացան: **Գենջի** և **Ճապաղջրի** հայազրկումը շարունակվեց նաև հետագա տասնամյակներին, հատկապես համիդյան «զուլումի» տարիներին: Մասնավորապես 1895-1896 թթ. հայկական կոտորածներն այստեղ ուղեկցվեցին զանգվածային բռնի կրոնափոխությամբ: Ընդ որում, դեպքեր են գրանցվել (օրինակ՝ **Ճա-**

**պաղջրում**), երբ քրիստոնեությանը վերադառնալու փորձերն ավարտվել են նոր ջարդերով: Արդյունքում **Գենջի** և **Ճապաղջրի** հայ բնակչությունը 20-րդ դ. սկզբին խիստ նվազել էր՝ կազմելով փոքրամասնություն: Մեծ եղեռնի նախօրյակին 2 գավառներում հայեր էին բնակվում 4 տասնյակից մի փոքր ավելի գյուղերում, մինչդեռ 1860-1870-ական թթ. վերջիններիս թիվն ավելի քան 7 տասնյակ էր (ցավոք, տվյալների պակասը հնարավորություն չի ընձեռում ավելի ամբողջական տեղեկություններ ներկայացնել): Հարկ է նշել, որ հայերի երբեմնի տեղաբաշխվածության մասին որոշակի պատկերացում կարելի է կազմել **Գենջի** և **Ճապաղջրի** հայեցի գյուղանուններից, որոնք ըստ առանձին գավառակների (գյուղախմբերի) ստորև ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը.

### 1. Գենջի գավառ.

**ա) Եղգիկի գավառակ. Դարբաջուր (Թարփաջուր), Հավրեկ-Ավերակ, Նախչիրիկ-Նախաջրիկ՝, Սմախ-Ծմակ, Վարդակ:**

**բ) Զքթեի գավառակ. Աջբասուր-Աչքաձոր, Արմաշեն, Դինասուր-Դինաձոր, Խորջուր, Խուրթ, Հեգասուր (Hegasur)-Հեգենձոր-Այգենձոր, Զանսուր-Ճան(ա)ձոր:**

**գ) Թավուսի և Ղամրանի գավառակներ. Այսշենիկ-Աղսնիկ-Աղձնիք՝, Բերդակ (Pertak), Էգքար-Այծքար, Թաղիկ, Խաչիկ (Տարոնի Սուրբ Հովհաննես-Եղրդուտի վանքի 1445 թ. հայտնի կոնդակում՝ «Խաչկաւնք»-«Խաչկօնք»), Սինդար-Սմպար (հիշվում է 1445 թ.՝ նույն փաստաթղթում), Սերկնիկ-Սերքնիք (քրդ.-գազայերեն՝ Sârkâvir, 1445 թ. նույն փաստաթղթում՝ «Սերկնիկի»):**

**դ) Փեչարի գավառակ. Անաշխուտ, Առվտնոց (Abidos, հիշվում է 1445 թ.՝ նույն փաստաթղթում), Ատաղսուր (Ataşur)-Ատաղ(ձ)ձոր, Արգելք (Arkılır, հիշվում է 1445 թ.՝ նույն փաստաթղթում), Զանգիսուր-Ծաղկիձոր, Խոսուր-Խորձոր, Կորմիկ-Կորմրիկ կամ Կորմրիչ (հիշվում է 1445 թ.՝ նույն փաստաթղթում), Հասիկ-Հացիկ, Հեգեքոզիր (Hegekozir)-Այգեկոծեր՝, Մոզոն (Mazrun, 1445 թ. նույն փաստաթղթում՝ «Մոզաւն»), Նաքսուր (Naksur)-Նիգձոր՝, Շատոս (Şatos)-Շատոց, Սերթուտ (Sertut)-Տրտուտ, Վանգիսուր (Vangisor)-Վանքիձոր (գյուղանունից պետք է ենթադրել, որ մոտակայքում եղել են մենաստանի ավերակներ), Վարդուկ կամ Վարդոն (Varton), Քարզել (Karzel)-Քարծեր՝, Քարուտ (Argat, հիշվում է 1445 թ.՝ նույն փաստաթղթում), Օ(Ո)սկենոց կամ բրբռ.՝ Հոսկենոց (Husgünüs):**

Ճապաղջրի գավառ.

**ա) Բուն Ճապաղջուր. Աղբիկ, Արմութաղ (Ermutağ), Բերդառաջք (Berderaç), Գյորիզ-Կոհառիձ, Գոչան (Գինեկի ձախակողմյան օժանդակը), Եղիկ, Հափսուր (Hepsur)-Ափթոռ (հիշատակվում է 1643 թ. մի ձեռագրում), Ղայթ կամ Ղիթ-Կիթ (այստեղից Գինեկի ձախակողմյան օժանդակ Կիթջուր գետակի, ինչպես նաև՝ Կիթառիձ կամ Կթիձ հնագույն բերդի անվանումները), Չաքվան-Չազվան՝, Պաղիկ (Bağik), Զերմուկ (Çermuk կամ Çermik՝ նույն գյուղից հյուսիս բարձրացող լեռնագագաթը), Զրիկ՝ (Çiriş), Տանձուտ (Tanzut), Փարախկոնք (Վերին և Ներքին, Perhangök), Քարթալ:**

**բ/ Գյույնուր-Օղնուտ. Ազիզան<Արիզան<երիզա (Ն. Ադոնցի վերականգնումը), Ակնիկ (Eğnik), Աղազեղ, Արջուկ<Արջոնք՝ (Arçük), Զրիկ (Çirik), Սաղնիս կամ Սառնիս<ծախանիստ (մոտակայքում գտնվող պատմական բերդի անունից), Սևիկ (Վերին և Ներքին), Քրմաչեք:**

Հոգևոր առումով **Գենջի Մանաչկուտ** գավառակը (գյուղախումբ) և **Ճապաղջրի** գավառը մտնում էին **Մշո Սուրբ Կարապետ վանքի** թեմի մեջ: **Գենջի Արածանուց** հարավ ընկած գավառակները գտնվում էին **Մշո Սուրբ Հովհաննես (Եղրդուտի)** վանքի իրավասության ներքո, ինչն արձանագրվել է նախորդ հոդվածում արդեն հիշված 1445 թ. նշանավոր կոնդակում:

1915 թ. թե՛ **Գենջի** և թե՛ **Ճապաղջրի** հայ բնակչությունը ենթարկվեց զանգվածային կոտորածի: Փրկվել հաջողվեց միայն անհատների, որոնք ցրվեցին այլևայլ վայրեր: Ի դեպ, սիրիահայերի շրջանում մինչ օրս հանդիպում է **Ճապաղջուրյան** ազգանունը:

Ստորև ներկայացված 2 գավառների հայաբնակ գյուղերի ցանկում մի փոքր խախտել ենք նախորդ հոդվածներում ընդունված սկզբունքը՝ դրանցում ներառելով նաև 19-րդ դ. վերջին տասնամյակներին և 20-րդ դ. սկ. հայաթափ եղածները: Կարծում ենք, դա ընթերցողին ավելի հստակ պատկերացում կտա **Գենջում** և **Ճապաղջրում տեղ գտած** հայաթափման ծավալների մասին:

**Լ. Գենջի գավառ (հայաբնակ գյուղերը)**

**ա. Գենջ, Եղզիկ, Զքթե, Թավուս և Ղամրան գավառակներ**

#	Բնակավայր	Եկեղեցի	Գպրոց	Այլ տեղեկություններ
1	Առաքել			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
2	Արշեն (Արդուշեն, Աջիշեն)	Սբ Պողոս	1	Ինչպես ավանում, այնպես էլ շրջակայքում պահպանվել էին 5-6 ավերակ եկեղեցիներ և հայկական ուխտատեղիներ: Նշված սրբավայրերից մեկը, որը քարաշեն էր և կամարակապ, տեղացիները կոչում էին « <b>Վանք</b> » ( հավանաբար երբեմնի մենաստան էր): <b>Արշենից</b> շուրջ 4 կմ հվ-արևելք՝ <b>Արածանի-Մուրատի</b> ձախ ափին գտնվում էր գավառի միջնադարյան կենտրոն <b>Գենջ</b> կամ <b>Գենջե</b> (հյր. <b>Գանձի</b> , հնարավոր է նաև՝ <b>Գանձակ</b> ) բերդավանք: Պահպանվել էր համանուն կիսավեր բերդը: Բնակավայրը վերջնականապես հայաթափ է եղել 1840-ական թթ.:
3	Արծենք (Արզիք)			
4	Դիարիբոք (Եղզիկ)			
5	Դիարիբոք (Զքթե)			
6	Դուշմալան (Թյուշմալան)			
7	Թալ			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
8	Խորձավանք (Խոսրովանք)			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.: Հավանաբար ժամանակին մոտակայքում գոյություն է ունեցել մենաստան, ինչպես երևում է գյուղանունից, որը քրդերի շրջանում հայտնի էր <b>Դերիկ</b> անունով (Derikê-«վանքի գյուղ»):

9	Խորջուր (Կորեկջուր՝)			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.: Նույնացրել ենք 1445 թ. <b>Տարոնի Աբ Հովհաննես-Եղրդուտի</b> վանքի կոնդակում հիշվող <b>Կորեկջուր</b> բնակավայրի հետ:
10	Խմարան (Ղամարան)	եկեղեցի		
11	Կուպար (Քուսիար)			
12	Կոնոս (Գոնոս)			
13	Կրրնկան (Գրրնգան)	եկեղեցի		
14	Ճապկնուտ (Ջավկնուտ, Ջանուտ)	եկեղեցի		
15	Մոդան			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
16	Շեն (Սին)			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
17	Ուլխա (Վերինգեղ ՝)			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
18	Չմահենի (Չմայենի)			Հայաթափվել է 1890 -ական թթ.:
19	Վալեր (Վալիր)			<b>Ջրթեի</b> կենտրոնն էր:
20	Վերս (Վերսիկ)			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
21	Փարչանչ			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
22	Փունարաղաջի (Ծառաղբյուր)			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
23	Քարուտ			
24	Քյամուտ (Քախմուտ, Կաղամախուտ)	եկեղեցի		

**բ. Մանաշկուտ (Մալաշքուրթ, Մառաշքուրթ)**

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Անգակ (Անկակ)			
2	Բոգյան (Պոկյան)	Սբ Սարգիս		<b>Մանաշքուրթի</b> կենտրոնն էր:
3	Խարաբա (Խարաբա-Քարբաս, Պորպես, Ջյունկերտ)	եկեղեցի		Նույնացվում է պատմական <b>Ջյունկերտ</b> քաղաքի հետ, որը, 6-րդ դ. վերակառուցվելով պարսից <b>Վախթանգ</b> գործարի կողմից, ի պատիվ վերջինիս կոչվեց վերանվանվել է <b>Պարպես</b> կամ <b>Պորպես</b> : <b>Ջյունկերտի Կաթողիկե</b> եկեղեցու մուտքի առջև է թաղվել 640 թ. արաբական հրոսակներին <b>Գրգուռ</b> լեռան մոտ առաջինը կազմակերպված դիմադրություն ցույց տված <b>Տիրան Մամիկոնյան</b> իշխանը, որին <b>Հովհան Մամիկոնյան պատմիչն</b> անվանում է «Հայոց մարզպան»:
4	Կծու (Գծու)	Սբ Դանիել		
5	Կվարս (Քիրվազ, Կուառս)	Սբ Աստվածածին	1	Տարոնի, հնագույն բնակավայրերից էր, որը պատմիչ <b>Ջենտր Գլակը</b> անվանում է գյուղաքաղաք: Ըստ ավանդության՝ հիմնադրել է հնդիկ քուրմ <b>Գիսանեի</b> որդի <b>Կուառը</b> , որի անունով էլ կոչվել է <b>Կուառս-Կվարս</b> : <b>Կուառի</b> կողմից տեղում հաստատված հոր կուռքի համար բնակավայրը հայտնի էր նաև <b>Գիսանե</b> անվամբ: Նույն հեղինակի ակներևորեն ուռձացված տվյալների համաձայն <b>Կուառսը</b> , որն <b>Իննականյան</b> մեհյանի հարկատու 12 դաստակերտներից մեկն էր, ուներ 3012 «երթահամար» (ծովս): Քրիստոնեության ընդունումից հետո <b>Կուառսը</b> մտել է <b>Գլակավանքի</b> կամ <b>Սբ Կարապետի</b> թեմի մեջ:



				Վաղ միջնադարում <b>Տարոնի</b> արևմտյան հատվածում ձևավորված <b>Պալունիք</b> (« <b>Պալունեաց երկիր</b> ») գավառի կենտրոնն էր: <b>Սուրբ Գրիգոր Լուսավորչի</b> կողմից <b>Կուառսի</b> մերձակայքում հիմնվել է մենաստան, ուր ամփոփվել են սրբերի նշխարներ: Ամենայն հավանականությամբ այդ վանքը գտնվել է 20-րդ դ. սկ. մոտակա <b>Շեյիդ կամ Շեհիդ</b> լեռան (արաբ.՝ šāhid-«վկա, նահատակ») սրբավայրի տեղում, որը հարգի էր նաև քրդերի շրջանում: 1914 թ. <b>Կվարսը</b> վարչականորեն մտնում էր <b>Սշո գավառի</b> մեջ, թեև աշխարհագրորեն ավելի կապված էր <b>Մանաշկուտին</b> և որպես կանոն՝ եղել է <b>Գենջի սանջակի</b> կազմում: Գյուղի մոտ էր գտնվում նաև <b>Գյումբեթներ</b> ( <b>Վերին</b> և <b>Ներքին</b> ) տեղավայրը, որը <b>Սբ Կարապետի</b> ոչխարի հոտերի մակադատեղին էր: Միաժամանակ <b>Վերին Գյումբեթը</b> հայտնի ուխտատեղի էր: 1914 թ. <b>Կվարսը</b> Գենջի մեծ գյուղերից էր՝ շուրջ 1200 հայ բնակչով: Ուշագրավ է, որ գյուղի հայերի հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր, ուստի նրանք քոչվորական կյանքով էին ապրում և աչքի ընկնում իրենց քաջությամբ ու մարտունակությամբ:
6	Կվարս, Վերին			Վերինի ագարակը:
7	Հասանբեկ (Դերե Հասանբեկ)			Հայաթափվել է 1890 -ական թթ.:
8	Ղալարան (Խալարեն)			
9	Սալաբերմի (Բայրաման)			Հայաթափվել է 1890 -ական թթ.:
10	Նորեկ			
11	Պողե (Բողիկ)	Եկեղեցի		
12	Վեսինըրգ (Ոսիներգ, Մուշեղամարգ)			Հայաթափվել է 1890 -ական թթ.: Գյուղից շուրջ 4 կմ հվ գտնվում էր <b>Խաչիկ</b> կամ <b>Խաչորիկ</b> երբեմնի հայաբնակ գյուղը:
13	Փարխու	Սբ Հակոբ		<b>Տարոնի Սբ Հովհաննես (եղորոտի)</b> վանքի 1445 թ. հայտնի կոնդակում հիշվում է <b>Փարխալ</b> ձևով (« <b>Փարխալ</b> և իր մզրէքն»): Եկեղեցու անունը ձշտել ենք 1548 թ. գյուղում գրված մի ձեռագրի հիշատակարանի հիման վրա:

**գ. Փեչար (Բեչար)**

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Անդև (Անտիվ)	Եկեղեցի		
2	Դալանե(կ)			
3	Եղմուկ (Եղմուրք)			
4	Հերեզին			
5	Հերքին			
6	Մզակ	Եկեղեցի (2)		
7	Մուրդարեկ			
8	Նորշեն			

9	Պարավ (Բարաֆ)			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
10	Րիզ	Եկեղեցի (3)		
11	Փեչար (Բեչար)			

## II. Ճապաղջրի գավառ (հայաբնակ գյուղերը)

### ա. Բուն Ճապաղջուր

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Դարբասան (Դարվագան)			
2	Դիք (Դրք)			
3	Թակուրան (Թարոյան)			Հայաթափ է եղել 1890-ական թթ.:
4	Թոյիրեկ			Հայաթափ է եղել 1890-ական թթ.:
5	Խարաբա			Հայաթափ է եղել 1870-1880-ական թթ.:
6	Ղարիք			Հայաթափ է եղել 1870-1880-ական թթ.:
7	Ճապաղջուր (Չևիկ, Չավլիկ)	Սբ Գևորգ, Սբ Հակոբ	1	Կիսավեր բերդին կից ավանն էր, որի պատճառով կոչվում էր <b>Չևիկ</b> թրք. Çiftlik- «ագարակ»:
8	Մատրակ (Մադրաք)	Սբ Կիրակոս	1	
9	Մուշիկ (Մուշեկ)			Հայաթափ է եղել 1870-1880-ական թթ.:
10	Մուսյան			
11	Շինակ (Շնակ, Մնակ)			Հայաթափ է եղել 1870-1880-ական թթ.:
12	Սիմձոր (Սնձոր)			
13	Փարխանդ (Ֆախրան)	Եկեղեցի	1	

### բ. Գյոյնուկ (Օղնուտ)

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ալիփիբրան (Ալիփունար)	Սբ Աստվածածին (Ս Թորոս)	1	Մոտակայքում կային 2 ավերակ վանքեր:
2	Բադրան	Եկեղեցի		Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
3	Թոխլիան (Թոքոլան, Թորգոման)	Սբ Աստվածածին		
4	Կլեն (Կյալեն, Բերդ)	Սբ Սարգիս (Սբ Կիրակոս)		
5	Ղարղաբագար	Եկեղեցի		Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
6	Ցախավել (Սախավերան)			Հայաթափվել է 1870-1880-ական թթ.:
7	Օղնուտ	Սբ Գևորգ, Սբ Կարապետ	1	Գավառակի կենտրոնն էր: Մոտակայքում է գտնվել պատմական <b>Եղանց</b> կամ <b>Եղնուտ (Ողնուտ)</b> բերդը:

Summary

**HISTORICAL AND DEMOGRAPHIC IMAGE OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE**

Part six: The northern, eastern and western provinces of Bitlis vilayet

Gegham M. Badalyan

**Key words** – Bulanukh, St. Daniel Monastery, Liz melikate, Yondzhalu melikate, Manazkert, Vardo, Datvan-Rahva, Genji, Chapaghdzhur, self-defense of the Upper Bulanukh.

We would like to present to the reader's attention the following districts of 3 sanjaks of Bitlis Vilayet – Bulanukh, Manazkert, Vardo (Mush sanjak), Khlat or Akhlat with a small district – Datvan Rahva (Bitlis central sanjak), Genji, Chapaghdzhur (Genji sanjak). These administrative units occupied the northern, eastern and western parts of the vilayet. Among the most Armenian-populated areas of Western Armenia were Bulanukh and Khlat (with Datvan). In these administrative units the Armenian population was overwhelming until 1915, particularly in the first two districts – 65–68%, and in the group of Datvan villages – 90%. The number of the Armenian population in other districts has declined due to well-known circumstances, although here, too, on the eve of the First World War one could still find many “islands” of the Armenian population. Genji and Chapaghdzhur sanjaks and Vardo village especially suffered from ethnic cleansing resulting from regular devastating battles that were motivated by Kurdish elders in the 18–19 centuries and were accompanied by mass penetration of new tribes. In the 30–40-ies of the 19th century the Turkish government was deliberately populating by Kurds most of the land abandoned by the Armenians, and the 60–70-ies of the same century they were joined by the Caucasian mountaineers and some Turkic-speaking ethnic groups. As a result of such a policy at the end of the 19th century the districts of Manazkert, Vardo, Genji and Chapaghdzhur significantly lost their national character, becoming areas mainly populated by alien tribes.

**ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКИЙ ОБЛИК ЗАПАДНОЙ АРМЕНИИ  
НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН**

Часть шестая: Северные, восточные и западные уезды  
Битлисского вилайета

Гегам М. Бадалян

**Ключевые слова** – Буланух, монастырь Св. Даниила, меликство Лиз, меликство Йонджалу, Маназкерт, Вардо, Датван-Рахва, Гендж, Чапахджур, самооборона Верхнего Булануха.

Вниманию читателя представляем следующие уезды 3-х санджаков вилайета Битлис – Буланух, Маназкерт, Вардо (Мушский санджак), Хлат или Ахлат с малым уездом Датван-Рахва (Битлисский центральный санджак), Гендж, Чапахджур (санджак Гендж). Данные административные единицы занимали северную, восточную и западную части вилайета. Среди них наиболее армянонаселенными районами Западной Армении были Буланух и Хлат (вместе с Датваном). В данных административных единицах армянское население составляло подавляющее большинство до 1915 года, в частности, в первых двух – 65-68%, а в селах Датвана – 90%. Численность армянского населения других уездов снизилась в связи с известными обстоятельствами, хотя и здесь тоже, накануне Первой мировой войны по-прежнему встречались многие «островки» армянского населения. Этнической чистке подверглись в особенности санджаки Гендж и Чапахджур, а также уезд Вардо в результате регулярных племенных опустошительных сражений сподвигнутых курдскими старейшинами в 18-19 вв., которые сопровождались массовым проникновением новых племен. В 30-40-х годах 19-го века османское правительство намеренно заселяло курдами большинство земель принадлежавших армянам, а в 60-70-х годах того же века к ним присоединились кавказские горцы и некоторые тюркоязычные этнические группы. В результате такой политики уже в конце 19-го века уезды Маназкерт, Вардо, Гендж и Чапахджур значительно утратили свой национальный характер, став районами в основном заселенными иными племенами.